№ 7 (160) XV ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 1905

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ

Ի՞նչ են մտածում վրացիները—ահա քաղաքական կարեւորագոյն հարցը, որ ներկայ ճգնաժամին զբաղեցնում է և՛ հայերին, որոնք մահմէտական ատելութեան պտուղներն են վայելում, և՛ թիւրքերին, որոնք իրենց անմիտ գործողութիւններին աջակից ունենալու յատուկ կարիք ունեն, և՛ ցարիզմի գործակալներին, որոնց համար թանկ արժէ վրացիական համակերպումը կառավարչական ամօթալի ու արիւնոտ գործերին...

Ի՞նչ են մտածում վրացիները։

Յեղափոխական շրջանները, խորապէս ներշնչւած հակամիապետական ոգով, անկեղծ կողմնակից՝ կովկասեան բոլոր ազգերի անխախտ համերաշխութեան, ցասման ճիչ արձակեցին Բագուի արեան դիմաց, և այդ ցասումը կրկնապատկեց, երբ ցարական գործակալները, միացած սուլթանական քարոզիչներին, այդ արեան ալիքները տարան տարածեցին Արարատեան դաշտի բոլոր ծայրերում, այն վայրերի մէջ, որոնք հանդիսանում են իբրև կենտրոնավայր հայ ժողովրդի քաղաքական բողոքների։ Յեղափոխութեան կոչն էր այդ, որ լսեց վրացի ընկերների բերանից թէ՛ արտասահմանում, ուր ապաստանել է նրանց մարտիկ երիտասարդութեան մի մասը, թէ՛ Վրաստանի մէջ, ուր նրանք մի քանի անգամ առիթներ գտան շեշտելու իրենց վրդովմունքը կատարուող բռնութիւնների դիմաց, և եղբայրական ձեռք կարկառեցին վշտոտ հայութեան...

Մեզ համար թանկ արժէ այդ վրդովմունքը, բղխած մարտական շրջաններից, որոնց մտածողութեան կերպը և քաղաքական հայեցակէտը մենք լաւ ենք ճանաչում և բարձր գնահատում։ Անծանօթ է մեզ համար, սակայն, մի այլ շրջանի, վրաց ոչ-յեղափոխական մասի, սովորական խօսքով՝ „ղեկավար շրջանների“ հայեցակէտը, որը ցʼայժմ չէ արտայայտուել շօշափելի կերպով և բացի մի քանի բացառիկ դէպքերից մնում է անծանօթ, անորոշ։

Թերահաւատութեան զգացմունքը չէ, որ թելադրում է մեզ ներկայ փափուկ օրերին հրապարակ բերել այդ քաղաքական հարցը, վերին աստիճանի նուրբ և միաժամանակ շատ բարդ։ Դրա պատճառը այն տխուր լուրերն են, որոնք ստացւում են Կովկասից, նոյնիսկ մեր բարեկամ վրացիական շրջաններից.

„Վրաց հասարակութեան մէջ յամառօրէն զանազան լուրեր են տարածւում, ասում է նամակագիրը։ Պնդում են, որ հայերը դէմ են կովկասեան ֆեդերացիայի մտքին, և այդ մեղադրանքի նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կանգնեցնել վրաց հասարակութեան համակրելի մասն անգամ հայերի դէմ։ Կառավարչական գործակալները մի քանի անգամ արդէն փորձել են գրգռել վրաց ամբոխը. հաւատացնողներ կան, որ Թիֆլիսում նոյնիսկ մատնանիշ են արել այն խանութները, որոնք պատկանում են հայերին։ Գաւառից ստացւած տեղեկութիւններ յայտնում են, որ եթէ թիւրք և ռուս խուժանը հակահայկական ցոյց անի, վրաց ամբոխն էլ ոտքի կը կանգնի և կը խառնւի ջարդերին“...

Անտահմանօրէն ծանր, մօթաբեր խօսքեր։ Ոստիկանական „ծուխն է“ այդ, նախանշանը մի աւերիչ հրդեհի, եթէ վաղօրօք չհանգցւի նա և անհետ չմարի՝ մեր և վրաց հասարակութեան հանուր ջանքերով։

Տարաբախտաբար քաղաքական արկածախնդիրների ձեռքով բորբոքւած փոխադարձ անվստահութիւնը դեռ շարունակւում է տիրել մեր առօրեայ կեանքի այլևայլ խաւերին։ Նոյնիսկ քաղաքական այս տագնապի միջոցին, երբ Կազբէկի և Արարատի հովիտներում ապրող բոլոր ժողովուրդների միակամութիւնն է պահանջւում կորստեան վիհը անցնելու համար, երբ աւելի քան երբևիցէ պէտք է լռեն ներքին տարաձայնութիւններն ու մանրիկ հակաճառութիւնները, մենք դեռ ունենք ներքին „թշնամութեան“ նշաններ, անմիտ „ընդհարումներ“, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ ապացոյցներ երկու կողմի քաղաքական աններելի տհասութեան։

Գազանացած բռնապետութեան գործակալները չեն խնայում ոչ մարդ՝ հաւաքւած կոյր ամբոխի տականքի միջից, ոչ փող՝ գողացւած պետական գանձարանից և ոչ էլ դաւեր՝ սարքած մինիստրական և փոխարքայական սրահներում,—նետելու համար հայ ժողովրդի վրայ ոչ միայն մահմէտական տարրը, այլև մեր վիճակակից վրացիներին և ռուսներին, որոնք դժբախտութեան օրերին՝ կարող են և պէտք է լինեն յեղափոխական բանակի անբաժան մասերը։ Նախ բաժանել վրացիներին հայերից և ապա հրել նրանց հայերի դէմ,—ահա կովկասեան իշխանութեան այսօրեայ նպատակը, տենչանքը, ինքնարդարացման միակ միջոցը...

Մի՞թէ տեսանելի չէ այդ։

Աշկարայ է այդ, ինչպէս և այն, որ կառավարչական նախկին „քնքշութիւնները“ դէպի քաղաքական Վրաս-

տանը՝ արդիւնք չէին նրա բարեացակամութեան, այլ լոկ հետևանք նրա նենգ դիտաւորութիւններին։ Դեռ հարիւր տարի առաջ միապետութիւնը շլացուցիչ խոստումներ արեց „անձնուէր“ Վրաստանին։ Խոստացաւ նրան անկախութիւն, փառք, ազատութիւն, լայն իրաւունքներ։ Եւ այդ բոլորի փոխարէն դիւրահաւատ ժողովրդին ոչինչ չմնաց, բայց եթէ շղթայակապ հայրենիք, հողազուրկ գիւղացիութիւն, եկեղեցի՝ առանց լեզուի, լեզու՝ առանց գործածութեան, ազգ՝ առանց իրաւունքների։ Երբեմն Պետերբուրգի կառավարութիւնը միամիտ հայերին իրեն գործիք դարձրեց՝ վրացիական ուժը ջախջախելու համար։ Այժմ էլ վրաց ազնուականութիւնն է շոյում ու հրապուրում՝ հայութեան նոր հարուածներ տալու նպատակով։

Դաւադիր կառավարութեան հրապուրանքներն ու խաբեբայութիւնները նպատակ ունեն շշմեցնել, խաբել դարևոր հարևաններին, անհաշտ թշնամիներ դարձնել դրանց և մղել դէպի անարգ, եղբայրասպան, մահաբեր կռիւ։ Թիւրքը արդէն զոհ գնաց այդ դաւադրութեան և դարևոր նախատինքով ծածկեց իր մռայլ պատմութիւնը, իր անանխանձ գոյութիւնը։ Մի թէ՞ նոյն խարդախութեան զոհ պիտի գնայ „վրացի“ անունը կրող բազմատանջ ամբոխի մի մասնիկն անգամ, որի քաջարի զաւակները դեռ երէկ ազատութեան ու համերաշխութեան ռազմերգ էին հընչեցնում գուրիական ձորերում, պատրաստ կուրծք տալու ընդհանուր թշնամուն...

Քաջ գիտենք։ Ստորամիտ ստրկանութիւնը միացած հասարակութեան նախատինքը կազմող մութ, արկածախնդիր, վաճառուող անհատներին, կարող է „պատմութիւններ ստեղծել“։ Նրանք արդէն առիթներ են որոնում։ Նակաշիձէի սպանութիւնը մէկն է այդ առիթներից, որը շահագործում են՝ որտեղ և որքան կարող են։ Կան ուրիշ դէպքեր ևս, որոնց մասին շշնջում են ժողովրդի ականջին հազար ու մի առասպելներ։

Զգաստ եղէք և խորաթափանց, վրացի ընկերներ։ Ասացէք ձեր ժողովրդին, ձեր լեզուով և հարազատի ուժգին շեշտով, որ Բագրի կոտրածների հեղինակի սպանութիւնը թշնամանք չէ վրաց ժողովրդին, այլ լացումը մի նախատինքի, որ իբրև քաղաքական մի բիծ, արատաւորում էր անմատն վրացի ժողովուրդը։ Բացատրեցէք, որ մեր քաղաքական ընդհանուր նպատակի աջողութեան համար, յեղափոխական ձեռքը անխնայ պէտք է հարուածներ իջեցնէ ժողովրդի և ազատութեան թշնամիների գլխին, ինչ ազգի և ինչ դիրքի և պատկանեն նրանք։ Յեղափոխական տէռորիստի համար չկայ ազգայնական խտրութիւն։ Նա ձեռք կ'իջեցնէ հայ դաւաճանի ու դաւադրի վրայ նոյն ատելութեամբ, եթէ մանաւանդ այդ դաւաճանը իր արարքների զոհ է դարձնում մի այլ ժողովուրդ՝ վրացի կամ ռուս...

Դառացած կնուտի և սուրի թագաւորութեան դիմաց, յափշտակուած այն գեղանի հեռանկարով, որ բերում է մեզ անդրկովկասեան ֆէդերասիոնի տենչալի գաղափարը, մենք նետուած ենք այդ արիւնոտ, անհաւասար, տանջալից քաղաքական կռիւի մէջ ոչ յանուն ազգայնական, առանձնաշնորհուած նպատակների, այլ յանուն յեղափոխական այն մեծ ծրագրի, որ ձգտում է սփոփել տանջուած, աշխատաւոր, հալածական մարդկութիւնը՝ անխտիր կերպով, հաւասարապէս, եղբայրաբար։ Ազատագրական կռիւի համար մենք ձեռք մեկնեցինք և թիւրք դրացիներին։ Աջակցութեան փոխարէն նրանք մեզ սուր մեկնեցին, արեամբ ողողեցին մեր երկիրը։

Եւ քաջալերուած արեան գետերով, որոնք այժմ հեղեղում են Երևանեան նահանգը, բռնապետութիւնը ուզում է ատելութեան ու թշնամութեան ալիքները տարածել և վրացիական գաւառներում, այն վայրերում, ուր հաշտութեան գաղափարը դեռ բարձրագլուխ է և յաղթական։ Նրա իդէալն է՝ հայ-վրացիական ընդհարում։ Այդ իդէալի յաղթանակը կը լինի՝ ողբալի նախատինք քաղաքական Վրաստանին ու Հայաստանին, մի նոր հարուած այն դաշնակցութեան, որով ներշնչուած է գեղեցիկ, բայց ապաքախտ Կովկասը։

Հեռատես լինենք, վրացի ընկերներ։

Միասին ըմբոստանա՛նք արատաւոր թաթի դէմ։

ԿՈՏՈՐԱԾ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Լեհական քաղաքներում նոյնպէս հոսում է արիւնը։ Այնտեղ էլ, ազատութեան այդ քաջարի ռազմիկների հայրենիքում, ցարիզմը կատարում է սոսկումներ, անսովոր իրենց որակով ու քանակով։

Վարշավա ու Լօձ՝ դարձեալ մի անգամ կոտորածի թատերաբեմ դարձած՝ կրում են բռնութեան անխնայ ու անգութ հարուածները։ Ինչպէս Անդրկովկասում, լեհական փառունակ երկրի մէջ ևս՝ միապետութիւնը արեան ու սարսափի մէջ է ուզում խեղդել ազատութեան ծիլը, ժողովրդական տանջանքի անզուսպ աղաղակը։ Մի տարբերութիւն միայն։ Լեհաստանում չկայ մահմէտական խուժան և համիսլամական կրակով վառուած ամբոխ՝ ազատութեան ծարաւ ժողովրդի վրայ նետելու համար։ Խուժանի տխուր դերը այնտեղ կատարում է զինուորների ու կօզակների վոհմակը, որ սրով և կրակով մահ ու արիւն է տարածում փողոցներում ու հրապարակների վրայ։

Անդրկովկասեան արհաւիրքներն անգամ, որոնք սուգով են պատել ամբողջ հայկական աշխարհը, անկարող են մոռացնել տալ մեզ եղբայր-ժողովրդի մեծ վիշտը։ Լի յարգանքով, գլուխ խոնարհած՝ բռնութեան զոհերի յիշատակի առջև, մենք յայտնում ենք լեհական յեղափոխութեան և նրա անվեհեր ու հերոս մարտիկներին մեր սրտաբուղխ համակրանքը ու անխախտ հաւատը՝ վերջնական աջողութեան։

Կեցցէ՛ ազատ Լեհաստանը։

Կեցցէ՛ ազատ ժողովուրդների դաշնակցութիւնը։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

„ԱՐԻՒՆ ԸՆԴ ԱՐԵԱՆ“

Թափօրներ կազմեցինք, այցի գնացինք մզկիթները, յարգանքով և սրտաբաց Թիւրք հիւրեր ընդունեցինք հայոց եկեղեցիներում, հաշտութեան և համերաշխութեան մասին խլացուցիչ ճառեր արտասանեցինք։

Բայց ի՞նչ օգուտ։

Ժողովներ կազմեցինք նահանգապետների մօտ, բաց արինք մեր սիրտը, „գարևոր հարևանութեան“ ու „եղբայրութեան“ մասին սրտայոյս քարոզներ կարդացինք, անէծք Թափեցինք ննջեցեալ „չէյթանների“ գլխին, սպառնացինք բաց անել նրանց դիմակը, նրանց դիւական ծրագիրը...

Սակայն ինչ օգուտ։

Մասնաւոր ժողովներին յաջորդեցին մեծադղորդ միտինգները. հռետորները՝ փաստաբան, իրաւագէտ, յեղափոխական, սօցիալիստ, Թիւրք, հայ, ռուս, վրացի, մեղադրական ճառեր արտասանեցին, դատարանով ու բանտով սպառնալիքներ եղան „նախապատրաստողների“ և ղեկավարների հասցէին, հասարակաց բռնկւած քննադատութիւնը նախատինքի էջեր ստեղծագործեց՝ լի անուններով ու ակնարկներով։

Դարձեալ անօգուտ։

Հանգստացած, օրօրի ենթակայ, խաբւած հայը ոխը հանած սրտից, մոռացած երէկւայ աղէտն ու եղեռնը, հանգիստ սրտով գործի գնաց, ձեռք առաւ քլունգը, բաց արեց խանութը, վերսկսեց ընդհատւած աշխատանքը...

Եւ ահա պայթեց որոտը։

Դաւադիր թշնամին որ ստորաբար բուն էր դրել Բագւից շատ հեռու, դուրս նետւեց իր պահակից և սլացաւ անպաշտպան հարևանի վրայ։ Թալան, բռնաբարութիւն, հրդեհ, կրօնափոխութիւն, աւերած, սպանութիւն...

Թիւրք ինտելիգենտներ, կաշառւած սուլթանի ոսկիով, ոստիկաններ՝ հեղինակ սրիկայական ծրագիրների, աւազակաբարոյ խաներ ու բէգեր, յղփացած կոյր Թիւրք ժողովրդի քրտինք-աշխատանքով, պօլիտիկոսներ՝ սիրահար դաւերի ու խառնակութեան — այդ բոլոր մութ ուժերը, զարդնւած ցարիզմի ու համիսլամական դպրոցում, հրապարակ եկան օրը ցերեկով, անվախ, առանց ամօթի, և կատարեցին մեծագոյն ոճիրը, ամենաստոր գործը՝ մարդկային ձեռքի։

Ոճիրը սոսկում տարածեց։

Արեան և արտասուքի մէջ՝ դարձեալ մի անգամ հնչեց հաշտութեան կոչը, աղերսական հրաւէրներ ուղղւեցին Թիւրք հարևանութեան, խողխողւող կանայք ոճրագործների ոտներին փարած՝ յիշեցրին „միասին կերած հացը“, դրացին դրացու դուռը բախեց, անկիւն, միջամտութիւն, շնորհ խնդրեց — բայց դարձեալ անօգուտ։ Ոճրագործութիւնը մնաց անողոք, չարագործը՝ ամբարտաւան...

Եւ ահա յուսահատ, վիրաւոր, անօգնական հայութիւնը, համբերութիւնը հատած, օրհասականի մռունչ արձակեց և կանգնեց թշնամու դիմաց։ Կոտորածը ընդհարման փոխարկւեց, խողխողումը՝ կռւի։ Տների մէջ ռումբ պայթեց։ Հրացանների որոտը տիրեց շէն ու գիւղերին։ Եւ հայն էլ սկսեց կոտորել...

Դիրքերը փոխւեցին։ Դարևոր համբերութիւնը, որ հայ է կոչւում, նա որ ստրուկ մնաց, որպէս զի ոճրագործ չսեպւի, որ թալանի տւեց իր տունը, իր աշխատանքը, նոյնիսկ իր ընտանեկան պատիւը, բայց երբեք չթալանեց, չքանդեց, չբռնաբարեց հարևանի տունը, ստացւածքը և պատիւը, գերագոյն յուսահատութեան հանդէպ, վիրաւոր ստորագոյն խաբէութիւնից, ցնցւեց իր ամբողջութեամբ, դէն նետեց խոնարհութիւնը և գոչեց՝ Ակն ընդական, Ատամն ընդ ատաման։

Ահա անխուսափելի հետևանքը ցարական անգթութեան, Թրքական դասը, տրւած հայ ժողովրդին։

Մեղաւորը մենք չենք։

Մենք ուզեցինք խաղաղ լինել, — մեզ վախկոտ սեպեցին։ Մենք ձգտեցինք դէպի քաղաքակրթութիւն, դէպի դպրոց, — մեզ քշեցին դէպի կռիւ, դէպի արիւն։ Զէնքի տեղ մենք գրիչ վերցրինք, Թալանողի դերի փոխարէն՝ մշակողի դերը, — մեզ համարեցին Թուլամորթ, արժանի ոտնակոխ լինելու։ Մենք սէր քարոզեցինք, — մեզ պատասխանեցին ատելութեամբ, հալածանքով։

Եւ ատելութիւնն ու հալածանքը, սուրն ու զէնքը, կռիւն ու արիւնը հայի փեշակ դարձրին, առօրեայ արհեստը՝ տանջւած և խաբւած հայութեան։

Մեղքը վատ հարևանի վզին։

Փետրուարեան սոսկալի օրերին՝ մեր հաշտութեան կոչը մնաց արհամարւած, անլսելի. յորդորն ու խրատը՝ ապարդիւն։ Եւ երբ որոտաց հայդուկեան մօսինը, երբ փողոցներում երևաց վրիժառու, ինքնապաշտպան հայը, այն ժամանակ միայն Թիւրքը վար դրեց զէնքը, այն րոպէին միայն կանգ առաւ անմեղ արիւնը։

Երկու ամիս անցած, երբ Նախիջևանի եղեռնը սպառնում էր հիմնայատակ անել ամբողջ Երևանը, դարձեալ ապարդիւն, անլսելի մնաց խաղաղամիտ հայ ազգաբնակութեան աղերսն ու յորդորը, խրատն ու դիմումը։ Եւ միայն հրացանի որոտն ու ռումբի պայթիւնը սաստեց խելագար Թիւրք խուժանը, որը յետ քաշւեց, վայր դրեց արիւնոտ սուրը և չորս պատերի մէջ փակւեց...

Կեանքի դասն է այդ, անողոք ու հրամայական։

Ընտրեցէք հայեր, դուք էլ զինւեցէք։

Գութին՝ գութով, սուրին սրով պատասխանեցէք։

„ԴՐՕՇԱԿ“Ի ՁԵՌԱԳԻՐՆԵՐ
(ՈՒՂԱՐԿՒԱԾ ՆԻՐՈՂԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

ԹԻՖԼԻՍ, 4 յունիսի

Ռուսական Հայաստանի վիճակը սպառնական է և ծանր։ Էրիվան-Նախիջևանի գաւառում մահմէտականների ձեռքով տասն օրից ի վեր սկսած են թալան, կողոպուտ, բռնաբարութիւն, սպանութիւններ։ Աւերումները տարածւում է դէպի Շարուրի, Օրդուբաթի և Զանգեզուրի գաւառները։ Քրդական հրոսակախմբերը, անցնելով պարսկական սահմանից, անպատիժ կերպով խժդժութիւններ են կատարում ռուս ոստիկանութեան աչքերի առջև։ Մայիսի 24-ին Նախիջևանի քաղաքային շուկան ամբողջապէս այրւեցաւ. այնտեղ եղած քաղաքային յուսահատ դիմադրութիւնից յետոյ՝ համարեա բոլորը կոտորւեցին։ Կանխազգացականներ Ագամեան, Ակուլեաթեան և

ուրիշներ այրեցին։ Թմբուլ գիւղում այրեցին 40 հայեր։ Կարմիր-վանքը և ուրիշ շատ եկեղեցիներ ենթարկեցին թալանի։ Ճանապարհները բռնած են թիւրքերով, որոնք թոյլ չեն տալիս մերձակայ տեղերից օգնութիւն հասցնել հայերին։ Ռուս կառավարութեան կատարեալ անտարբերութիւնը սիրտ է տալիս կողոպտող մահմէտականներին։ Համարձակութիւնը այնտեղ է հասել, որ մի քանի տեղերում ստիպում են հայերին մահմէտականութիւն ընդունել։ Զոհերի թիւը շատ մեծ է։ Վնասը միլիոնների է հասնում։ Նման դէպքերի երկիւղ կայ նոյնիսկ գլխաւոր կենտրոններում, ինչպէս Երևան և այլ քաղաքներ։ Կառավարութեան մեղսակցութիւնը ապացուցված է։ Նոր փոխարքայ Վարանցով-Դաշկովի անգործ վերաբերմունքը առաջ է բերել ընդհանուր ցասում։

ԲԱԳՈՒ, 5 յունիսի

Նախիջևանի գիւղերի բնակիչները՝ խմբած Շխահմուտ գիւղում՝ պաշարած են թիւրքերով։ Ազգաբնակութեան յոյսը՝ դրած զօրքի և ոստիկանութեան վրայ՝ ունայն դուրս եկաւ։ Թալան, սպանութիւն։ Թիւրք-քրդական ահագին խմբերը սպառնում են շատ հեռուն տարածել իրենց թալանը, օգտուելով այն հանգամանքից, որ այդ շրջանում հայերը փոքրամասնութիւն են կազմում։ Կասկած չկայ, որ այս ողբերգութիւնը վաղուց է պատրաստված և որոշ ծրագրով։

ԵՐԵՒԱՆ, 5 յունիսի

Երևանի թիւրքերը կասկածելի դիրք են բռնել։ Կառավարութիւնը պերճախօս փաստեր ունի ձեռքին՝ պանիսլամական գաղտնի պատրաստութիւնների մասին, բայց կոյր է ձևանում։ Ընդհանուր վրդովմունք կայ փոխ-նահանգապետի դէմ, որ Նախիջևան գնալով՝ ստիպեց հայերին խանութները բանալ, որը և եղաւ սկիզբն յարձակման և կոտորածի։ Դէպի թիւրքերի ասածները հաւատ չկայ։

ԹԻՖԼԻՍ, 6 յունիսի

Երևանի լուրերը անհանգստացուցիչ են։ Մայիսի 10-ին թիւրքերը յարձակում գործեցին հայերի վրայ, որոնք յանկարծակիի եկած՝ զոհեր տուեցին։ Հայերից սպանուեցին 8, վիրաւորուեցին 18։ Թիւրքերից՝ սպանուած 1, վիրաւոր՝ 2։ Յաջորդ օրը ընդհարումը արիւնահեղ եղաւ։ Քաղաքային հրապարակի վրայ մի թիւրք ատրճանակով փորձեց սպանել մի հայի. դա եղաւ կուի նախանշան։ Անմիջապէս քաղաքը տակնուվրայ եղաւ։ Շուկան փակուեց։ Լուեց հրացանաձգութիւն։ Հայերը ունեցան 1 սպանուած, 1 վիրաւոր։ Թիւրքերի վիրաւորների և սպանուածների թիւը հասնում է 40-ի։ Կառավարութեան նենգամիտ և ստոր դիրքի պատճառով՝ Անդրկովկասը սպառնում է սոսկալի ոճիրների թատերաբեմ դառնալ։

ԹԻՖԼԻՍ, 7 յունիսի

Մայիսի 24-ին և 25-ին Երևանում ընդհարումները շարունակուեցին։ Հայերը համբերութիւնից դուրս եկած, վճռեցին բուռն դիմադրութիւն անել և թիւրքերին մի դաս տալ։ Սպանուած են մօտ 100 թիւրքեր։ Վիրաւորները շատ աւելի են։ Մի քանի հարիւր թիւրքեր դիմեցին պարսից հիւպատոսին, պաշտպանութիւն խնդրելով։ Կառավարութիւնը մինչեւ այդ անտարբեր, մինչամտեց։ Զօրք դուրս բերուեց՝։ Քաղաքը յայտարարուած է պաշարման վիճակի մէջ։

ԹԻՖԼԻՍ, 7 յունիսի

Երևանում ընդհարումները շարունակւում են։ Հայերը համբերութիւնից դուրս եկած, կատաղած թիւրքերի դաւադիր վերաբերմունքից, կատաղի դիմադրութիւն ցոյց տուին։ Տեղի ունեցաւ արիւնահեղ կուիւ։ Հայերի կողմից՝ երկու սպանուած և երեք վիրաւոր. թիւրքերի կողմից 100 սպանուած և բազմաթիւ վիրաւորներ։ Կառավարութիւնը, տեսնելով հայերի տուած զգալի հարուածը մինչամտեց։ Թիւրքերը վայելում են ոստիկանութեան յատուկ խնամքը։ Յաղթուած՝ քաղաքի մէջ, մահմէտական ֆանատիկոս խմբերը գործում են անպատմելի բռնութիւններ շրջակայ գիւղերում։ Մուսուլմանները սրբազան կռիւ են յայտարարել հայերին։

ԹԻՖԼԻՍ, 7 յունիսի

Քաղաքը խուլ յուզմունքի մէջ է։ Տարածւող լուրերը աղմկայոյզ են։ Ոստիկանապետ Գօվալիով գաղտնի կերպով զինում է ռուս և թիւրք խուժանին պատկանող թափառաշրջիկներին։ Դիշերը պրիստաւները ժողովներ են գումարում մութ խորշերում։ Ոստիկանութիւնը փորձում է զրգռել վրացի ամբոխը ևս։ Յայտնւում է, որ մի քանի ռուս սպաներ գաղտնօրէն սովորեցնում են թիւրքերին զինավարժութիւն։ Բացւած են անհաւատալի փաստեր։

ԹԻՖԼԻՍ, 12 յունիսի

Վերջին լուրերը յուզիչ են և եզակի կովկասեան պատմութեան մէջ։ 5,000 քիւրդ ձիաւորներ ապցսկ պարսկաստանը և յարձակում գործեցին հայ գիւղերի վրայ։ Շաբուրի շրջանը կրակի և սրի է մատնուած։ Խանլըխլար գիւղում հայ փախստականները պաշարուած են 3,000 քիւրդերով և թիւրքերով։ Պաշարուածների մէջ են 120 ռուս զինուոր և մօտ 100 կօզակ։ Երեք օրուայ դիմադրութիւնից յետոյ՝ ռուս զինուորները յետ քաշուեցին դէպի երկաթուղային գիծը՝ պատրակելով թէ հրանիթ չկայ։ Ժողովրդի վիճակը անյայտ է։ Հաղորդակցութիւնը կտրուած։ Քրդերը փորձում են առաջանալ դէպի Դավալու, Ղամարլու և նոյնիսկ Երևան։ Ենթադրւում է, որ վրանք համիդիականներ են։ Ամբողջ Երևանի նահանգում, բացի Ալէքսանդրօպոլի շրջանից, կոտորածն ու թալանը ընդհանուր է։ Կառավարչական ստոր քաղաքականութեան ստեղծած վիճակը ողբալի է։ Ցարիզմը և սուլթանիզմը միացած՝ թև են տալիս մահմէտական ամբոխին՝ ընդդէմ հայ տարրի։

ԹԻՖԼԻՍ, 16 յունիսի

Նորանոր ընդհարումներ։ Խանլըխլար գիւղը հաւաքւած հայերը երեք օր շարունակ դիմադրեցին իրենց պաշարող թիւրքերին և քիւրդերին։ Յունիսի 15-ին ռուս զինուորները յարձակում գործեցին պաշարողների վրայ և նրանցից սպանեցին 150 հոգի, գերի վերցրին 88։ Համիդիական քրդերը անցան սահմանը Օլթիի և Իգդիրի մօտ։ Ընդհարում տեղի ունեցաւ նրանց և սահմանապահ զինուորների միջև։ Ռուսների կողմից սպանուեցին 15 զինուորներ և մի սպայ։ Համիդիական շարժումը ընդունում է սպառնական կերպարանք։ Երևանի ընդհարումը շատ ծանր էր։ Հայերի ցոյց տուած դիմադրութիւնը ստիպեց թիւրքերին հաշտութիւն խնդրել։ Հայերը յայտնեցին, որ թիւրքերի ամէն մի փորձին կը պատասխանեն ամենախիստ միջոցներով։ Նախիջևանի շրջանում զոհերի թիւն է 260։ Մօտ տաս հազար հայ կարօտ են նիւթական օգնութեան։ Թիֆլիսի հայ ժողովուրդը պահանջեց կառավարութիւնից՝ ազատութիւն զէնք կրելու, ինքնապաշտպանութեան համար։ Փոխարքայի անգործութիւնը սիրտ է տալիս թիւրքերին։ Հայերի մի պատգամաւորութիւն խնդրեց պարսից շահին, որ անցաւ Կովկասով Եւրոպա գնալու, հովանաւորել Պարսկաստանի հայերին։ Յեղափոխական խմբեր են կազմում՝ անզէն ժողովրդին պաշտպանելու համար։ Զեռք են բերուած պաշտօնական թղթեր, որոնք արտացոլում են կառավարութեան մասնակցութիւնը վերջին անցքերի մէջ։

ԲԱԳՈՒ, 17 յունիսի

Նորագոյն լուրերը աւելի ու աւելի վրդովեցուցիչ են.

զտնուած են շրջաբերականներ, թիւրքերէն լեզուով, որոնցով շիա և սիւննի մահմէտականները հրաւիրում են միանալ և միահամուռ ուժերով կռուել քրիստոնեաների դէմ։ Համիսլամական գործակալները թուով շատանում են Անդրկովկասում։ Բթամիտ կառավարութեան լարած ինտրիգը հայերի դէմ աւելի առաջ է գնում, քան ինքը կարծում էր։ Երևանի նահանգի իշխանութիւնը պահանջում է նոր զօրք և կրկնակի ուժեր։

ԹԻՖԼԻՍ, 18 յունիսի

Հայ-թիւրքական կռիւը շարունակւում է՝ առանց նուազման։ Երևանի շրջանի մէջ՝ հայերը համբերահատ՝ յարձակում գործեցին այն թիւրք գիւղերի վրայ, որոնք աղէտալի դէպքերի միջոցին յայտնի էին դարձել իրենց ոճիրներով։ Հայ յեղափոխական կոմիտէները հրատարակեցին շրջաբերականներ, ազդարարելով, որ կռիւը կը լինի անողոք և «ատամն ընդ ատաման» թիւրքերի դէմ, որոնք հայերի կոչերին, դէպի համերաշխութիւն և եղբայրութիւն՝ պատասխանեցին սրով, կրակով և բռնութիւններով։ Երևանի թիւրքերը, սարսափած իրենց զոհերի քանակից. հաշտութեան առաջարկ արին։ Հայերը, չվստահելով, լուրջ երաշխաւորութիւն են պահանջում։ Գեներալ Ալիխանով. մահմէտական, և փոխ-նահանգապետ Տալանովսկի, իշխան Գ լիցինի նախկին թիկնապահը, որոնք ուղարկուած են Նախիջևան կարգը վերահաստատելու, հանդիսացան իբրև հովանաւորներ կոտորածը սարքող մահմէտականների։ Իշխան Վորոնցով-Դաշկովի չարամիտ քաղաքականութեան ապացոյցներից մէկն էլ այդ է։ Հայերը ամէն տեղ աշխատում են զինուել, չվստահանալով ոչ կառավարութեան և ոչ էլ մահմէտականների հաւաստիացումներին։

ԴԷՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱՒԱՌ

Թիֆլիս, 12 մայիսի

Բագւի մէջ սկզբնաւորուած քաղաքականութիւնը տարածում է գտնում և այլ գաւառներում։ Թիւրք ամբոխի մոլեռանդութիւնը, գրգռուած ոստիկանութեան ձեռքով, այլևս սահման չէ ուզում ճանաչել։ Աղէտաբեր դէպքերի կենտրոնը այժմ Հին-Նախիջևանի գաւառն է։

Ստացուող լուրերը ծանր են և յուզիչ։

Բագու, 13 մայիսի

Նախիջևանի ջարդը սկսուեց մայիսի 12-ին, միաժամանակ քաղաքում և գիւղերում։ Քաղաքում կողոպուտի է ենթարկուած միայն բազարը, ուր գտնուող հայերին սրի անցկացրին։ Քչերը կարողացան ազատուել։ Առ այժմ գտնուած են մօտ երեսուն դիակներ, որոնց թւում Կարապետ Ադամովի, նրա փեսայի, գործակատարի, երեք Խալաթեանների։ Տեղական իշխանութիւնը անգործութեան աններելի նշաններ ցոյց տուեց։ Զօրքը վրայ հասաւ երկու ժամ յետոյ միայն և բաժանուած զօրախմբերի՝ տեղ բռնեց թաղերի մէջ։ Լուրերին նայելով զոհերի թիւը հարիւրից աւելի է։ Ջահուկցիների և միւս հայ գիւղերի դրութիւնը ծանր է։ Զոհերի թիւը որոշ չէ։ Շխմահմուտ գիւղում հաւաքուել են Նազարապատ, Գիզլի, Ուզունօբա, Գիգուվար, Խալխալ, Քիլթափա գիւղերի բնակիչները։ Հաջիվար գիւղը այրել են։

Պետերբուրգ, 13 մայիսի

Անդրկովկասից ստացուող լուրերը վրդովեցուցիչ են։ Հայ-թիւրքական ընդհարումները դաւադիր ծրագրի արդիւնք պէտք է համարել անկասկած։ Պարսկաստանից թիւրք և քիւրդ հրոսակախմբերի սահման անցնելը և և յարձակումներ գործելը — ապացոյց է, որ տեղական իշխանութիւնը ոճրագործութեան հասած անտարբերութեան է հասել։

Երևան, 14 մայիսի

Նախիջևանի առաջին սպանութիւնը պատահում է այսպէս. — Մի թիւրք անյայտ չարագործների ձեռքով սպանւում է քաղաքի ծայրում, Ալիապատ հայ գիւղի ճանապարհին։ Թիւրքերը սպանութիւնը անպայման հայերին վերագրելով, գրգռւում են հայերի դէմ։ Մի քանի մութ անձինք դիտմամբ կրակի վրայ իւղ են ածում։ Դէպքը տեղի է ունենում երեկոյեան ժամը 9-ին. իսկ առաւօտեան թիւրքերը օր ցերեկով սպանում են մի բոլորովին անմեղ հայի։ Նոյն օրը ճաշին վիրաւորւում է մի ուրիշ հայ. յետոյ երրորդը։ Միւս օրը Ջահուկ գիւղի թիւրքերը, Շխմահմուտ հայաբնակ գիւղից անցնելիս, իրենց տաւարները հայերի արտերի մէջ են բաց թողնում, որի պատճառով թիւրքերի ու մի հայի մէջ կռիւ է ծագում. հայը թիւրքերից մէկին սպանում, իսկ միւսին վիրաւորում է։ Սպանուած թիւրքի համագիւղացիները, վրէժխնդրութեամբ լցուած, մի քանի հարիւր անձով (մեծամասնութիւնը զինուած) լցւում են ոստիկանատուն բողոքելու և հետևանքին չսպասած՝ յետ են վերադառնում և Շխմահմուտի ամբողջ հօտը քշում, տանում։ Տեղի է ունենում փոխադարձ կատաղի հրացանաձգութիւն։ Այդ դէպքից յետոյ արդէն թիւրքերի կազմակերպուած յարձակումը տեղի ունեցաւ։ Երէկ ահագին քանակութեամբ թիւրքեր մի հայի տան վրայ յարձակուեցան։ Նոյն գիշերը զինուած թիւրքեր Խալխալ հայ գիւղը մտնելով՝ ամենաբարբարոսաբար կտոր-կտոր են անում յայտնի հարուստ Խաչատուր Բաբասեանին իր կնոջ և մօր հետ։ Միւս գիւղերից եկող լուրերը նոյնպէս շատ ծանր են։

Թիֆլիս, 14 մայիսի

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ Նախիջևանի հայերն էլ, ինչպէս ուրիշ դէպքերում, զոհ եղան խ ա բ է ո ւ թ ե ա ն։ Նախիջևանի քաղաքային աւագը, Ռահիմ խան Նախիջևանցին, դիմելով հայերին, որոնք զգուշութեան համար խանութները չէին բանում, յորդորում, աղերսում է նրանց գնալ իրենց գործին, բաց անել խանութները, հաւատացնելով, որ խաղաղութիւնը վերջնական է և ինքը երաշխաւոր է ապահովութեան համար։ Հայերը հաւատում են և գնում շուկայ։ Հէնց որ բաց են անում խանութները, անմիջապէս տեղի է ունենում թիւրքերի յարձակում, կոտորած և հրդեհաձգութիւն։ Թիւրք ամբոխը զինուած էր բերտաններով, ատրճանակներով և խէնջալներով։ Մի՞թէ քաղաքային աւագը անպատիժ պիտի մնայ այդ գարշելի վարմունքի համար։

Թիֆլիս, 15 մայիսի

Երէկ կէս վաշտ զինուորներ հասան Թմբուլ այն ժամանակ, երբ հրդեհը արդէն բռնել էր ամբողջ գիւղը։ Գիւղի մեծ մասը կողոպտուած է։ Քսանից աւելի սպանուածներ կան և շատ վիրաւորուածներ։ Հայ և թիւրք հոգևորականութեան մի քանի ներկայացուցիչներ աշխատում են խաղաղացնել թիւրք ամբոխը, բայց յորդորները կազդեն կատաղած և անպատիժ կողոպտելու հնարաւորութիւն ունեցող ամբոխին միայն այն ժամանակ, երբ նա կը տեսնէ բաւարար քանակութեամբ

սուիններ։ Ալէքսանդրոպոլից ճանապարհ ընկած բժիշկները չեն կարողանում Նախիջևան գնալ։ Յարձակում է գործւել Գիւզնուտի և Փառակայ գիւղերի վրայ։ Ամենից առաջ անհրաժեշտ է զինւորւած ուժ։

Երևան, 16 մայիսի

Նախիջևանի և շրջակայ գիւղերի հայերին հասած սարսափներն ու թշւառութիւնները նկարագրել անկարելի է։ Թեմական առաջնորդից և ուրիշ անձերից ստացւած հեռագիրների համաձայն՝ քաղաքում սպանւած և վիրաւորւած հայերի թիւը 100-ից աւելի է։ Վեց հոգի այրւած են։ Գիւղերում աւելի են ունեցել սպանութիւններ, կողոպուտ, հրդեհաձգութիւններ։ Մի քանի գիւղերից անասունները քշել տարել են։ Գիւղացիներից շատերը ամէն ինչ թողնելով, հաւաքւում են քաղաք։ Կարիքը ծայրայեղ է։ Անհրաժեշտ է շուտափոյթ և լայն նիւթական օգնութիւն։ Թէ ինչո՞ւ մինչև հիմա զօրք չէ ուղարկւած — մնում է գաղտնիք։ Յարձակում գործեցին նոր նիկ եկեղեցիների և վանքերի վրայ։

Թիֆլիս, 17 մայիսի

Կամաւոր սանիտարական խումբ ուղարկւեց Նախիջևան՝ վնասւածներին օգնելու։ Սակայն խումբը տեղ չէ կարողանում հասնել, որովհետև ճանապարհները բռնւած են թիւրքերով։ Կառավարութիւնը նոյնիսկ բժշկական օգնութեան գնացողների համար ճանապարհ չէ բաց անում։ Վնասւած գաւառին սպառնում է սով։ Պետական գանձարանից դեռ ևս մի օգնութիւն չի եղել։ Օգնողները դարձեալ հասարակական շրջաններն են։ Փոխարքան կարգադրեց, որ հանգանակւած գումարները բաժանելու համար յանձնւեն պաշտօնական անձանց, որոնց ուղղամտութեան ոչ ոք չի հաւատում։

Նախիջևան, 24 մայիսի

Գիւղերում դեռ ևս յարձակումները չեն վերջացել։ Զիւանշիրի կողմերից ահագին քանակութեամբ ձիաւոր և զինւած թիւրքերը շրջապատել են հայաբնակ Ղազանչի գիւղը, որը ամբողջ մի շաբաթ կռւել է տեղական թիւրք գիւղերի հետ։ Այժմ էլ դրանց վրայ աւելացել են Զիւանշիրի կատաղի թիւրքերը։ Վերջին ընդհարումների հետևանքը դեռ ևս յայտնի չէ։ Պատմում են, որ բաւական քանակութիւնով թիւրքեր են սպանւել Ղազանչի և Զնաբերդ հայ գիւղերում։ Շէյխ-ուլ-իսլամը Օրդուբաթ է ուղևորւել։ Վնասւածներ և բաւական սպանւածներ կան հայերից և Գողթանի գիւղերում (Ալլահում, Նասրվանում, Փառակում ևն)։ Դեռ ևս կողոպտւած ապրանքները չեն գտնւած և ոչ էլ խուզարկութիւններ կատարւած։ Ոստիկանութիւնը յամառութեամբ հրաժարւում է խուզարկել և գտնել թալանը։ Բռնաբարւած և փախցրած են շատ հայ կանայք և աղջիկներ։ Գիւղերում սպանւածների դիակները դեռ ևս ընկած են փողոցներում։ Թիւրքերը սպառնում են հայերին, որ չհամարձակւեն իրենց անունները իշխանութեան տալ։

Պարիզ, 7 յունիսի

Գրութիւնը Անդկովկասում ժամ ՝ ժամ ընդունում է ծանր կերպարանք։ Թալանները, հրդեհաձգութիւնները ու կոտորածները, որոնք սկսւած էին տաս օրից վեր Հին-Նախիջևանի գաւառում, այժմ տարածւում են Շարուրի, Օրդուբատի, Զանգեզուրի և Զիւանշիրի գաւառները։ Քրդական հրոսակները պարսկաստանից տնպատիժ կերպով անցնում են ռուսական սահմանը և չլսւած անգթութիւններ գործում։ Նախիջևանի հայերը մի յուսահատ դիմադրութիւնից յետոյ ենթարկւեցին մեծ վնասների։ Ռուս ոստիկանութիւնը և զինւորները անտարբեր են։ Համարեա բոլոր հայերի խանութները թալանւեցին և վերջն էլ հրդեհւեցին։ Մի քանի վաճառականներ դիմադրութիւն ցոյց տալու պատճառով կենդանի այրւեցին։ Թմբուլ գիւղում 40 մարդ-մեծ մասամբ կանայք ու երխաներ անխտիր՝ ողջ ողջ այրւեցան։ Նշանաւոր Կարմիր վանքը ինչպէս նաև ուրիշ եկեղեցիներ թալանւեցան և պղծւեցան։ Ճանապարհները բռնւած են մահմէդականներով, որոնք թոյլ չեն տալիս անցնել նրանց, որոնք հայերին օգնութեան են գալիս։ Զոհերի քանակութիւնը, որ դեռ հաշւած չէ, չափազանց մեծ է։ Դիակները մնում են կիսւած փողոցներում։ Նոյնիսկ կենտրոնները, — Թիֆլիս, Բաթում, Բագու, Երևան սպառնալիքի տակ են։ Եղել են դէպքեր, երբ թիւրքերը ստիպել են հայերին ընդունելու մահմէդականութիւն։ Կենտրոնական կառավարութեան դաւաճան մասնակցութիւնը հաստատւած է։ Կովկասի նոր փոխարքայ իշխան Վ.Օրմնցով-Դաշկովի կրաւորական դիրքը առաջ է բերում ընդհանուր ցասում։

Բագու, 8 յունիսի

Գեներալ Ալիխանով ուղարկւեց Նախիջևանի գաւառը։ Հայ ազգաբնակութեան աննկարագրելի աղէտի պատճառը երկու ազգութիւնների ընդհարումը չէր, այլ զինւած թիւրքերի յարձակումը անզէն հայերի վրայ։ Յարձակումը վաղուց և խնամքով կազմակերպւած էր։ Թիւրք ղեկավարների դռների վրայ նախապէս կպցրած էին կարմիր թանաքով գրւած թղթեր, որոնց մէջ օգնութեան կոչ էր արւած Ալլահին և Մահմադին։ Տեղական իշխանութիւնը և զօրքը իբր թէ անզօր գտնւեցին դիմադրել կողոպտիչներին, թէև նրանց ցրւելու ու սանձելու համար բաւական էր հրացանի մի հարւած միայն։ Հայերը իրենց բոլոր զոհերը տւեցին շուկայում, ուր նրանք դուրս էին եկել շնորհիւ ոստիկանութեան ստիպողական պահանջի և Նախիջևանի խաների երաշխաւորութեան։ Նրանք խաբէութեան զոհ եղան, կողոպուտը կատարւում էր ամենայն ազատութեամբ։ Թիւրքերը հրաւիրել են երս կաթուղային փականագործներին, հայերի երկաթեայ դրամարկղները կոտրել տալու նպատակով։ Հայկական հարևան գիւղերը ենթարկւեցին յարձակման՝ պայմանաւորւած ժամին։ Ամէն ինչ ջարդւում և թալանւում էր նախօրօք որոշւած կարգով։ Թալանի և կոտորածի ղեկավարները կրում էին ֆէս և կանչում. „Եա՞ Ալի“։ Իրենց եռանդով աչքի էին ընկնում ջաղարացիները, ծառայորդ ունենալով իրենց տանուտէրին, որը կռւի էր բռնւել գաւառապետի հետ Ալագեազմաղրի վրայ յարձակւելու ժամանակ, որտեղ և բռնւեցին նրա երկու ընկերները։ Գազանութիւնները չափ ու սահման չունեն։ Շատ կանայք բռնաբարւած են, երեխաներ գցւած գետը։ Վանքերը պղծւած և կողոպտւած են։ Շխմահմադ հաւաքել են բազմաթիւ գիւղացիներ շրջականներից։ Նրանք զրկւած են ամէն ինչից։ Գաղթը ընդհանուր է։ Սով է սպառնում։ Ռազմպրութեան արժանի է այն փաստը, որ ոչ մի մահմէդական չէ վնասել նոյնիսկ այն գիւղերում, ուր ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը հայեր են, մինչդեռ շատերը հայերից սպանւած և անպատւած են իրենց հարևանների ձեռքով։ Հայերի տնտեսական քայքայումը, որը այս ջարդերի գլխաւոր նպատակն էր, լիովին իրագործւած է։

Նախիջևան, 9 յունիսի

Փոխարքային հաղորդեց Ամենափրկչի յափշտակութեան մասին։ Շխտահմուտցի քաջերի մի խումբ ցրեց աւարառուներին, յետ խլեց սրբութիւնը։ Երրորդ օրն է. քաղաքում և շրջակայ գիւղերով անարգել տանում են յափշտակուած գոյքեր։ Հայոց յաջորդը դիմեց կառավարութեան՝ պահանջելով կալանաւորել յանցաւորներին և յափշտակիչներին—բայց անօգուտ։ Բատալիոնի գալուց յետոյ իսկ հանգիստ իրեղէններ են կրում դէս ու դէն։ Թիւրքերը գատարկում են իրենց իանութները, որպէս զի յետոյ յափշտակութեան յանցանքը գցեն հայերի վրայ։ Յափշտակուած է Երևանից բերուած ապրանքի մեծ քանակութիւն։ Ղվրախում, Խոկում, Դարալագեազում և ուրիշ տեղերում հայերը վերին աստիճանի վտանգաւոր վիճակի մէջ են։

ԵՐԵՒԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ)

Երևան, 4 յունիսի

Վերջին օրերը կարծէք պատերազմի դաշտում լինենք։ Դէպքերը բուռն են և ցնցող։

Նախիջևանի աղէտից յետոյ՝ երևանցիները նոյնպէս սկսեցին պատրաստուել։ Հայերի և Թիւրքերի տրամադրութիւնը ծայրայեղ կերպով գրգռուած էր։ Հայերը իրենց պահում էին խիստ զսպած և ամէն կերպ աշխատում էին խոյս տալ ոևէ ընդհարումից Թիւրքերի հետ։

Կոտորածից դեռ մի քանի օր առաջ Երևանում սկսեցին երևալ Թիւրքերի նոր դէմքեր, որոնց մեծամասնութիւնը եկած էր հայերի բարիքները վայելու։ Դժուար է մոռանալ մի քանի Թիւրք անձնաւորութիւններ, որոնք երեկոյեան անցնում էին գլխաւոր փողոցով և ուշադրութեամբ դիտում էին թէ հիւրանոցները և թէ նրանց մօտ գտնուող՝ ները՝ երևի կոտորածի ժամանակ նրանց վրայ յարձակուելու դիւրութիւններ ստեղծելու համար։ Անեանի մահմէտականները հաւատացնում էին ազդեցիկ հայերին կոտորածի նախորդ օրն իսկ, որ Թիւրքերի կողմից կոտորածի ոևէ առիթ չի տրուի. նրանք երդւում էին դուրանով և իրենց բոլոր սրբութիւններով և խընդրում հայերին, որպէս զի սրանք ևս միջոցներ ձեռք առնեն հայերին խաղաղեցնելու։ Բայց դժբախտաբար Թիւրքերի հաւաստիացումները սուտ դուրս եկան, ինչպէս միշտ։

Մայիսի 23-ին, երկուշաբթի, ցերեկւայ ժամը 2-ին, շուկայի զանազան մասերում Թիւրքերը միաժամանակ սկսեցին հրացանաձգութիւն հայերի դէմ, որոնք 20-ի չափ սպանուած և վիրաւորուած ունեցան. Թիւրքերից վիրաւորուեցին միայն երկուսը, որոնք հաւանօրէն զարկուած են իրենց ցեղակիցների ձեռքով պատահմամբ, որովհետև հայերն այդ օր առհասարակ զէնքի չդիմեցին։ Սարսափելի էր տեսարանը, երբ անց էին կացնում հայերի անմեղ զոհերին՝ սպանուածներին ու վիրաւորուածներին։ Դանր էր տեսնել այդ անմեղ նահատակներին։

Կոտորածը սկսելուց յետոյ՝ Թիւրքերը սկսեցին շտապով փախչել և ժողովել իրենց Թաղերում։ Պահապանների հսկողութեան տակ նրանք խմբերով տուն էին դառնում։ Նոյն միջոցին, երբ մի խումբ Թիւրքեր անցնում էին քաղաքային այգու մօտով, լսեցին հրացանների պայթիւններ. այս ու այն կողմից սլանում էին գնդակներ։ Հայերի տրամադրութիւնը ծայրայեղ գրգռման մէջ էր, բայց բոլորն էլ իրենց զսպում էին, սպասելով տեսնել, թէ կառավարական պաշտօնեաները ի՞նչպէս կը վերաբերեն կոտորածի հեղինակներին։ Այդ միջոցին յայտնուեց նահանգապետը զինուորների հետ միասին. նա համոզեց հայերին կրակ չ՚անել։

Միւս օրը առաւօտեան հայերը համախմբուած փողոցում՝ պահանջում էին, որ իրենց յանձնուեն չարագործները։ Նահանգապետի մօտ հաւաքուեցան և Թիւրք խաները և պաշտօնապէս յայտարարեցին, որ կոտորածի հեղինակները Թիւրքերն են և մատնացոյց արին երեք Թիւրքերի, որոնց նկատմամբ նահանգապետից պահանջեցին ամենախիստ պատիժ։ Այդպիսով հայերին հանգստացնել աշխատեցին. բայց այդտեղ ևս Թիւրքերն իրենց սովորութեան հաւատարիմ մնացին. փոխանակ գլխաւոր ոճրագործներին՝ նրանք ներկայացրին, իբրև յանցաւորներ, ինչ որ խեղճ ու կրակ համալներ։

Այսպիսի մի զիջում իհարկէ հայերին չէր կարող հանգստացնել։ Ամսի 24-ին, ժամը 12-ին, երբ քաղաքային ոստիկանատան մօտ կանգնած էինք, յանկարծ մեզանից ոչ հեռու, հէնց ոստիկանատնից, լսուեց հրացանի պայթիւն, որ մեզ բոլորիս ապշեցրեց։ Այդ պայթիւնին յաջորդեցին անթիւ պայթիւններ հայերի և Թիւրքերի կողմից քաղաքի զանազան մասերում և սկսուեց ջարդ։ Այդ ժամանակ հայերն արդէն չկարողացան իրենց զսպել։ Ամբողջ գիշերը շարունակուեց անընդհատ հրացանաձգութիւն քաղաքի բոլոր մասերում։ Շատերը սպասում էին յարձակում հայերի Թաղերի վրայ Թիւրքերի կողմից, սակայն հայերը շնորհիւ իրենց օրինակելի կազմակերպութեան, կարողացան խնամքով պահպանել իրենց Թաղերը։ Այդ և յաջորդ օրը, ամսի 25-ին, Թիւրքերը զոհերի մեծ քանակ ունեցան, հարիւրից աւելի, իսկ վիրաւորներ աւելի շատ։ Առաւօտեան հայերը երեք ուղղութեամբ նետեցին մի Թիւրք տան վրայ, ուր մեռան մօտ 20 մարդ։ Զոհերի այդ քանակը խիստ ճնշող ազդեցութիւն ունեցաւ Թիւրքերի վրայ, որոնք այլևս չհամարձակեցան բաց կռիւ դուրս գալ։ Հայ կուսակցները իրենց անձնուիրութեամբ և գործը վարելու ընդունակութեամբ ընդհանուր ուշադրութիւն գրաւեցին և վաստակեցին նոյնիսկ ռուսների համակրութիւնը։ Եթէ նրանք չլինէին Թիւրքերը ամբողջ քաղաքը կ՚աւերէին։ Թիւրքերը մի քանի անգամ նոյնիսկ փորձեցին այրել հայերի խանութները, որոնք առաջուց կաւիճով նշանակուած են եղել։ Նոյն օրը հայերն ու Թիւրքերը ժողովուեցան նահանգապետի մօտ՝ հաշտութիւն կայացնելու համար։ Այդ բանին յատկապէս ձգտում էին Թիւրքերը, որոնք մեծ կորուստներ ունեցան։

Երեկ հայերը ներկայացրին նահանգապետին առաջարկներ, որոնց վրայ պէտք է հիմնուի խաղաղութիւնը։ Ահա այդ հանրագրի պատճէնը.

„Փետրուարի և մայիսի անցքերը հաստատում են, որ զրանց հեղինակները եղել են մահմէտականները, ուստի և ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է նրանց վրայ։ Յաճախակի փորձը ցոյց տուեց մեզ, որ մահմէտականների հաւաստիացումները, անկարգութիւնները չվերակսելու գործում, մեզ հաւատ չեն ներշնչում և չեն երաշխաւորում կեանքի խաղաղ ընթացքը։ Ուստի և մենք յայտարարում ենք,—խաղաղութիւնը վերականգնելու համար—ցանկալի և անհրաժեշտ է, որ մահմէտական ազգաբնակութիւնը իրեն հանգիստ պահէ, հակա-

ռակ դէպքում, մենք ստիպուած կը լինենք նրանց դիմադրել ծայրայեղ միջոցներով։ Քաղաքի վերջնական խաղաղացման համար մենք խորհուրդ ենք տալիս մահմեդականներին իրենց միջից քշել անկարգութիւններ կազմակերպողներին և հեղինակներին կովկասի սահմաններից դուրս։ Նկատի ունենալով այդ՝ վերջին դէպքերի և նրանց ապագայ հետևանքների պատասխանատուութիւնը մենք մեզ վրայ չենք առնի։ Այլ և նկատի առնելով ազգաբնակութեան անապահով վիճակը՝ ներկայ պայմաններում անհրաժեշտ է՝ դադարեցնել Երևանի նահանգում տիրող հայերին զինաթափ անելու միջոցները, մանաւանդ որ հայերը իրենց զէնքերը ի չարը գործ չեն դնում, այլ աշխատում են գործ դնել միայն ինքնապաշտպանութեան սահմաններում. ցանկալի է նոյնպէս, որ պաշտօնական լինեն Երևանի ոստիկանապետը և պրիստաւի օգնական Մէհմէտ բէկ Վէզիրովը"։

Ըստ երևոյթին այդ հանրագիրը լաւ տպաւորութիւն է թողել նահանգապետի վրայ։ Թիւրքերը պաշտօնապէս խոստովանեցին, որ ջարդը և անկարգութիւնը առաջացնողն ու սկսողը իրենք մահմէտականներն են, որի մասին նահանգապետը արձանագրութիւն կազմեց։ Նահանգապետը խօսք տուեց զինաթափ չանել ազգաբնակութիւնը, միայն զինաթափութեան համար խուզարկութիւններ կը կատարուին այն տներում, որտեղից հրացանաձգութիւն կը լինի։

Երէկւանից սկսած հայերն ու թիւրքերն երաշխաւորեցին խաղաղութեան համար և խօսք տուեցին նահանգապետին, սպանութիւնների կրկնութիւնների դէպքում, չարագործներին յանձնել կառավարութեան։ Հակառակ այդ բանին՝ մասնակի սպանութիւններ և հրացանաձգութիւնը շարունակւում են։ Խանութները բոլորը գոց են։ Քաղաքից շատերը հեռանում են։ Տրամադրութիւնը ընկճած է։ Երեկոյեան ժամը 8½ յետոյ ոչ ոք չի երևում։ Թիւրքերը շտապով տեղափոխւում են հայկական մասերից դէպի թիւրքականը։ Ոմանք կարծում են, որ երկար ժամանակ հաշտութիւն չի կարող տեղի ունենալ և թիւրքերը վաղ թէ ուշ կը փորձեն վրէժխնդիր լինել հայերից այն մեծ զոհերի համար, որը նրանք ունեցան Երևանում։

Թէ քաղաքի և թէ գիւղերի բնակիչները մտածում են զինւելու մասին։ Այսօր 7-րդ օրնէ, որ քաղաքում կեանքը բոլորովին մեռած է, և երևի շուտով չի վերականգնի, որովհետև խիստ ուժեղ կերպով է պարգացել թշնամութիւնը երկու տարրի միջև։ Եւ թող անիծուի նա, որ հարկաւոր գտաւ ստեղծել այս տխուր պատկերը։ Ի նչով պիտի վերջանայ այս բոլորը։

Սարսափելի տեղեկութիւններ են ստացւում գիւղերից, ուր անխնայ կերպով կոտորում են և ոչնչացնում ամբողջական գիւղեր երկու կողմից էլ։ Ազգաբնակութեան ներկայ թշւառ կացութիւնը քայքայիչ է։ Հօրքերը հետզհետէ հանում են։ Ընդհանուր կարծիք է, որ դիտմամբ զինւորների գալը ազդարարուած է։

Այսօր երկուշաբթի 8-րդ օրն է, որ շուկան փակ է։ Թիւրք ազգաբնակութիւնը խիստ նեղւում է այդ բանից, և այդ պատճառով նրանց մէջ սկսել է խռովութիւն։ Մանրավաճառները հայհոյում են այն խմբին, որ իրենց այդպիսի կրտիրական վիճակի հասցրեց։ Եթէ խանութները շուտ չը բացուին, թիւրքերը շատ կը նեղւեն իրենց մօտ ալիւր չը գտնելու պատճառով։ Հայերը իրենց թաղերում ամեն տեսակ մթերք ունին։

Անկարելի է չը յիշատակել մի սոսկալի դէպք։

Անկարգութեան առաջին օրը, երբ հայերը իրենց զսպում էին, թիւրքերը սպանեցին մի հայ վրդովեցուցիչ պայմաններում։ Երևանցի Սահակեանը իր կաշեգործարանում բանւոր թիւրքերին գլուխը ժողոված՝ բացատրում է եղել նրանց հայերի հետ խաղաղ ապրելու կարևորութիւնը։ Այդ նոյն րոպէին թիւրքերը շուկայից լուր են բերում թէ քաղաքում ջարդ սկսուեց. անխիղճ բանւորները անմիջապէս գնդակահար են անում գործարանի տիրոջը՝ Սահակեանին, կիսակենդան գցում են գետի մէջ և ապա սկսում քարկոծել, և այդ հրեշաւոր միջոցով էլ սպանում են նրան։

Թիւրքերը հեռագրել են Բագու, թէ հայերը իրենց կոտորում են, ուստի օգնութիւն են խնդրում։ Երևի նրանք էլ գիտեն, որ համիսլամական գլխաւոր գործակալները այնտեղ են գտնւում...

Լոնդոն, 7 մայիսի

Երէկ թիւրքերը յարձակեցան հայերի վրա Երևանում։ Հայերը յանկարծակիի եկած, ունեցան ութ սպանուած և 18 վիրաւոր։ Թիւրքերի կողմից մէկ սպանուած և երկու վիրաւոր։ Այս առաւօտ ժամը 4-ին մի թիւրք քաղաքային այգու մէջ հրացան արձակեց հայերի վրայ, որից առաջացաւ մեծ ընդհարում։ Հայերը ունեցան մէկ սպանուած և մէկ վիրաւոր։ Թիւրքերի կողմից սպանուածների և վիրաւորների թիւը 40-ից անցէ—մեծ մասամբ սպանուած։ Կռիւը շարունակւում է։

Երևան, 26 մայիսի

Չորրորդ օրն է քաղաքում ամբողջ կեանքը դադարել է։ Ժամ առ ժամ սպասում են կոտորածի վերսկսվելուն, Սով է։ Միս չը կայ։ Առաջին ընդհարումը տեղի է ունեցել բազարում, մայիսի 23-ին։ Այդտեղից կոտորածը տարածուեց քաղաքի ծայրերում։ Աստաֆեան փողոցի մօտ մի թիւրքի տան մէջ, պատնէշներով շրջապատուած՝ հայերը ռումբ են նետել, որից սպանուել են 8-ից աւելի։ Յայտարարուած է զինւորական դրութիւն։ Ազգաբնակութիւնը սարսափած՝ մեկնում է։ Հիւանդանոց տարուած են 38 վիրաւոր, 4-ը ծանր. մեռել են 5 հայ, 27 թիւրք, 9 հրէա, 1 ռուս, 1 կազակ։ Կառավարութիւնը հայերի տները խուզարկում է անդադար։ Ոստիկանութեան աշառութիւնը երես է տուել թիւրք խուժանին։ Հայերի արդարացի դժգոհութիւնը սահման չ'ունի։

Երևան, 26 մայիսի

Սպանուածների և վիրաւորների թիւը 100-ի չափ է։ Բոլոր խանութները փակ են։ Ամբողջ գիշերը սաստիկ հրացանաձգութիւն էր կուռող կողմերի միջև։ Հօրք շատ քիչ է. Խառնակութիւնները տարածւել են բոլոր գաւառներում։ Այս առաւօտ Ուլուխանլու կայարանից հեռագիր է ստացւել, որ դէպի այնտեղ են շարժւում բազմաթիւ թիւրքեր, որոնց մի մասը հաւանօրէն կը գնայ Երևան։ Դրութիւնը շատ լուրջ է։ Երկաթուղու կայարանը լիքն է քաղաքից փախչող ճամբորդներով։ Հրացանաձգութիւնը կատարւում է գլխաւորապէս պատուհաններից և տների տանիքներից։ Տեղական ազդեցիք թիւրքերը գաղտնի կապեր են պահում թիւրքիայի հետ։

Երևան, 28 մայիսի

Ութերորդ օրն է քաղաքում խանութները փակ են։ Նախիջևանի կոտորածը, այնքան բարեկամական հաւաստիացումներից յետոյ, ոչնչացրել է հայերի ամբողջ հաւատը դէպի թիւրքերը։ Այլ ևս հաւատացող չը կայ

ոչ Թիւրքերին և ոչ ոստիկանութեան։ Սպանութիւնները, հրդեհաձգութիւնները, արտեր կոխ տալը, տաւար քշել տանելը սպառնում են մօտ ապագայում լիապէս քայքայել գիւղացիների տնտեսութիւնը։ Գիւղացիներից շատերն այդպիսով կորցնելով իրանց կապը հողի հետ, թողնում են մայրենի դաշտերը գուցէ ընդ միշտ։ Հեռանկարը չափազանց տխրագին է։

Երևան, 28 մայիսի

Գիշերը անցաւ խաղաղ, գերեզմանային լռութիւնը միայն երկու անգամ խանգարւեց թեթև պայթոցներից։ Առաւօտեան ծագող արեգակի հետ փողոցները լցւեցին հայերով։ Թիւրք ոչ մի հատ. և եթէ մէկ-մէկ դուրս են գալիս, այն էլ շատ կարևոր գործի համար, ուղեկից ունենալով մէկ կամ երկու պահապան զինւորներ։ Յարաբերութիւնը գաւառի հետ միանգամայն ընդհատւած է։ Եթէ կենսական մթերքների չգոյութիւնը բացարձակ է հայերի մէջ, հասկանալի թէ ինչ կը լինի Թիւրքերի դրութիւնը, որոնք երրորդ օրն է, ինչ տանից դուրս չեն գալիս և կարծեք կատարեալ պաշարման վիճակի մէջ լինեն։ Այսօր յայտնի եղաւ, որ մի քանի խանութներ կողոպտելու փորձ է եղել։ Ծանր տպաւորութիւն թողեց այդ, քանի որ շուկան պահպանւում է զինւորներով։ Հայ վաճառականները դիմեցին գեներալ Շվեդովին, որը և գնաց գողութիւնների տեղը։

Երևան, 29 մայիսի

Կառավարութեան անգործնէութիւնը շարունակւում է։ Ընդհարումները քաղաքից անցնելով շրջակայ վայրերը՝ ընդունում են մեծ ծաւալ։ Ամէն տեղից լսւում են սպանութիւնների, թալանների և հրդեհումների լուրեր։ Զինւած ընդհարումները տեղի են ունեցել Ղամարլու և Նօվրուզլու գիւղերում. երկու տեղերումն էլ կան սպանւածներ և վիրաւորներ մեծ մասամբ Թիւրքերից։ Ղամարլու գիւղում դրութիւնը նոյնն է, ինչ որ Երևանում. Թիւրքերը քաշւել և փակւել են իրենց տըներում, իսկ հայերը ոչ։ Ուլուխանլու գիւղում Թիւրքերը փորձել են յարձակւել ճանապարհորդների վրայ, որոնք գտնւում էին երկաթուղու կայարանում. ընդհարումները աւերիչ չափեր են ընդունել Երևանի արևելեան կողմի լեռնային մասերում։ Արամուսի և Բաշգառնիի հասարակութիւնների շրջանում՝ դատարկւած, մասամբ թալանւած և մասամբ էլ այրւած են թըքաբնակ գիւղեր՝ Քիւմաշէն 20 տ., Քիւլուջա 50 տ., Մանգուզ 50 տ., Քեամալ 60 տ. և Թուլթիան 60 տ., հայաբնակ գիւղեր՝ Ոխչաբերդ 30 տ., Աւգալար 30 տ., Շօռ Բուլաղ 20 տ. և Ղարաչի Բուլաղ 20 տ.։ Թիւրք ժողովուրդը քաշւել է այդ գիւղերից Թաղաքեանդ և Ագարակ գիւղերը, իսկ հայ ժողովուրդը խմբւել է Զովէզ գիւղում։ Թիւրքերի հետ միացած են եղել նաև այդտեղերը չւող քրդեր և ընդհարումների ժամանակ, ինչպէս վկայում են, սպանւած են նաև քրդեր։ Սպանւածների թիւը ստուգել անկարելի է։ Դատարկւած գիւղերի շրջանում ցանքսերը դնում են ոտի տակ։ Մինչև ո՞ւր պիտի հասնի այս աւերը։ Մարդու սիրտը ճմլւում, քամւում է տեսնելով մի սոսկալի աւեր՝ փարթամ Երևանի նահանգում՝ իր հարազատ զաւակների ձեռքով։ Ամօ՜թ դաւադիր կառավարութեան. ամօ՜թ նրանց, որոնք սկսեցին այս աւերը։

Փարիզ, 30 մայիսի

Կովկասից եկած լուրերը կասկած չեն թողում, որ վերջին դէպքերը Նախիջևանի գաւառում պատահական գործ չէ։ Թիֆլիսից, Երևանից և այլ կէտերից կարելի է մի օրում զօրք հասցնել ընդհարման վայրը, բայց մի շաբաթում անգամ զօրք չգնաց։ Վօրօնցով-Դաշկով իրեն եղած դիմումներին պատասխանել է անորոշ խօսքերով. „Ինչ հարկաւոր է կանեմ“։ Հայոց կաթողիկոսը, Թիֆլիսի հայոց հոգևորականութեան գլուխը, հայոց հասարակութեան զանազան անդամներ և քաղաքագլուխը դիմումներ արեցին փոխարքային և նրա օգնականին, խնդրելով վերջ տալ այդ անտանելի վիճակին, — բայց բացի խոստումներից, դեռ շօշափելի գործ չէ կատարւած։

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(Թղթակցութիւն)

Թիֆլիս, 20 մայիսի (3 յունիսի)

Դրութիւնը սոսկալի է։ Ամէն տեղ վտանգ է սպառնում։ Կոտորածը իբրև մի համաճարակ՝ անցնում է մի շրջանից միւսը։ Գլխաւոր պատճառը կառավարութեան բռնած դիրքն է, որ քաջալերում է Թիւրքերին և գըրգռում նրանց թալանելու, աւերելու ախորժակը։ Իբրև ապացոյց՝ ահա հեռագրական երկու նմուշներ, որ գրաքննիչի եռանդի շնորհիւ հնարաւոր չէ եղել հրապարակ բերել այստեղ։

Նախիջևան։ — „Այստեղ անուշադիր են դէպի հայերի խնդիրները։ Թիւրքերի թալանները ոստիկանութեան կողմից չեն արգելւում։ Ազատամիտ ռուս պաշտօնեաները նախազգուշութիւններ են ստացել և սպառնալիք՝ հեռանալու մասին“։ (ստորագրութիւն)

Օրդուբաթ։ — „Դրութիւնը կրիտիքական է. շատ գիւղեր ոչնչացւած են։ Գաղթականները տանջւում են և սպասում մահմէտականութիւն ընդունել։ Գործւում են ամէն տեսակ բռնութիւններ։ Եթէ անմիջական օգնութիւն չլինի, միւս գիւղերն էլ կ՚ոչնչանան։ Օգնեցէք։“ (ստորագրութիւն)

Այդպիսի հեռագիրների հիման վրայ՝ շարունակ դիմումներ են լինում թէ փոխարքային, թէ նրա օգնականին՝ բայց առանց դրական մի հետևանքի։ Դրանք հանգստացնում են, թէ ամէն ինչ արւած է, թէ խաղաղութիւնն սկսել է, այն ինչ հաստատ տեղեկութիւնները բոլորովին այլ բան են ասում։

Կոտորածն արդէն անցել է Զանգեզուրի գաւառը։ Այսօր գաղտնի պաշտօնական հեռագիր կայ, որ հաղորդում է, թէ Դարալագեազից 300 զինւած Թիւրքեր պատրաստւում են անցնել Ջիբրայիլի գաւառը և թալանել։

Եւ այսպիսի տեղեկութիւններից յետոյ էլ կառավարութիւնը կտրուկ միջոցների չէ դիմում։ Սակայն այդ դեռ բոլորը չէ. ինչպէս Երևանում է, Նախիջևանում, որպէս և Բաքւում, կառավարութիւնն է եղել կոտորածի կազմակերպողը։ Այսօր Թիֆլիս եկան 60 ասորիներ Նախիջևանի գիւղերից. նրանք ականատես են եղել կոտորածին, նրա նախօրեակին և ահա թէ ինչեր են պատմում *)։

„Վերջին ժամանակներս Թիւրքերի և կօզակ օֆիցերների միջև մի զարմանալի մտերմութիւն էր սկսւել։ Օֆիցերները շատ անգամ գնում էին Թիւրքական գիւղերը „իբրև հիւր“ և ցանկացողներին հրացանաձգութիւն սո-

*) Այդ վկայութիւնները ռուսերէն լեզւով, նոտարական կարգով վերցնւելու են, որպէսզի ապագայ դատավարութեան ժամանակ ներկայացւին։

վերեցնում։ Այդ բանը շարունակւում է մինչև այժմ և այնպիսի կերպարանք է ընդունել, որ երևանցիները մոտ օրերս ստիպւած եղան այդ առիթով գրաւոր բողոք ներկայացնել Նախիջևանի կոտորածից մի քանի օր առաջ կասկածելի նշաններ էին երևում թիւրքերի կողմից։ Օրինակ. նրանցից մի քանիսին մի ազդեցիք թիւրք ասում է. „Այ, ախմախներ, ինչո՞ւ զէնքով ման չէք գալիս“, „բայց ուր է՞ զէնքդ կամ փող“ պատասխանում էին թիւրքերը.— „Է՞հ, ի՞նչ էք ասում, մի՞թէ Նախիջևանի խանը փող բիչ ուեի. դիմեցէք նրան“...—Հետևեալ օրը խօսակցող բոլոր թիւրքերը զինւած էին“...

„Կոտորածից յետոյ, երբ Թիֆլիսից փոխարքայի օգնականը հեռագրով կարգադրել էր յետ դարձնել կողոպուտները, թիւրքերը վրդովմունքով և զարմանալով բացականչում էին. „Սա ի՞նչ օրինաւորութիւն է. մէկը ասում է թալանեցէ՛ք, միւսը հրամայում է, թալանածներդ յետ վերադարձրէք“..

Այդքան պերճախօս տեղեկութիւններ տւեց ականատեսների առաջին խումբը. դեռ ինչեր պիտի լսենք, երբ նոր-նոր մարդիկ գան։ Ամենքի համար պարզ է, որ բարբարոս թիւրք ամբոխը գործիք է դարձել, որ մէկը նրան թելադրել ու կազմակերպել է։ Այդ կարծիքը հաստատւում է և նրանով, որ ոստիկանութիւնը մի առանձին եռանդով զինաթափ է անում հայերին, իսկ թիւրքերին գրեթէ չէ արգելում զէնք կրել։

Ահա այդ հանգամանքից դրդւած Հ. Յ. Դաշնակցութիւնը երէկ բաց թողեց մի թռուցիկ ռուսերէն լեզուով, որը ուղարկւած է բոլոր պաշտօնեաներին։ (Տես երես 110)։

Եւ փաստերը գալիս են ապացուցանելու, որ Դաշնակցութիւնը դատարկ խօսքեր չի ասում, այլ խօսքից անցնում է գործի։ Այսօր հեռագրով տեղեկութիւն է ստացւել, որ Բագւում ոստիկան Կիրիչենկօն տեռորի է ենթարկւել հէնց այն օրը, երբ նրա մատնութեամբ Տէլէֆօնայա փողոցում խուզարկութիւն էին կատարել և ռումբերի մասեր էին գտել մի հայի տանը։

Այս օրերս Նախիջևանի գաւառն են գնալու յատուկ թղթակիցներ և հայ ու ռուս փաստաբաններ։ Վերջիններս վկայութիւններ են հաւաքել՝ իբր ապացոյց դատավարութեան համար։ Գնում են նաև բժիշկներ։ Կառավարութիւնը այդ բանին էլ հաշտ աչքով չի նայում։

Թիֆլիսի ինտելիգենցիայի և բուրժուազիայի 24 ներկայացուցիչներ վաղը դիմելու են փոխարքային և պահանջելու, որ հայ ազգաբնակութեանը իրաւունք տրւի ինքնապաշտպանութեան համար զէնք կրելու։ Պարզ է, իհարկէ, որ պատասխանը՝ մերժում կը լինի։ Նոր փոխարքան հիասթափումն է առաջացնում ազգաբնակութեան մէջ։

ԿՈՎԿԱՍ

ԲԱԳՒԻ ՏԵՌՈՐԸ

(Նամակ Բագից)

—

16 մայիսի

Հեռագիրն արդէն հաղորդեց ձեզ իրողութիւնը։

Մայիսի 11-ին, ցերեկւայ 3 ժամին քաղաքի կենտրոնում սպանւեց իշխան Նակաշիձէն։

Ինչպէս գիտէք, Դաշնակցութիւնից զատ, նրա մահւան համար որոշում էր տւել նաև Ռուսաց Սոցիալիստ Յեղափոխականների կուսակցութիւնը մեզանից բոլորովին անկախ կերպով։ Տեղեկանալով այս մասին մեր Կոմիտէն, համաձայն ռուս ընկերների խնդիրին, որոշման գործնէութիւնը թողեց նրանց։ Սակայն երկու ամիս սանցած երբ մի քանի անսպասելի պատճառներով՝ գործը ուշացաւ, Դաշնակցութիւնը նորից իր վրայ առաւ նոյն ձեռնարկը, որը և իրագործեց մեծ աջողութեամբ։

Ռումբը արձակւեց հինգ քայլի վրայ։ Նա ընկաւ նոյն փողոցներում, ուր երկու ամիս առաջ՝ նրա բազմաթիւ զոհերի դիակներն էին թաւալում. Տեսարանը սարսափեցուցիչ էր,—Նակաշիձէն ջախջախւած, ալանդակւած՝ փողոցի մէջ տեղը. կառքը երկու կտոր եղած, ձիերից մինը և թիւրք կառապանը ծանր կերպով վիրաւորւած (մի քանի օրից յետոյ մեռաւ) Սպանւած են նաև Նակաշիձէի ծառան և մի պարսկահպատակ թիւրք մրգավաճառ, որ պատահմամբ մոտիկ էր գտնւում։ Սարսափը այնքան մեծ էր, որ մոտ տասն բոպէ ոչ ոք չէր համարձակւում մոտենալ սպանւածի դիակին։

Հնայելով որ դէպքի վայրում բազմաթիւ հասարակութիւն կար, ինչպէս և զինւորներ, այնուամենայիւ տհաբեկիչը ազատ է և դուրս որևէ վտանգից։

Թիւրքերի կողմից որևէ շարժում տեղի չունեցաւ, դա վերագրելի է ռումբի ազդած սարսափին։ Սակայն նախնական տպաւորութիւնը անցնելուց յետոյ զանազան տեսակ լուրեր սկսեցին շրջել՝ ինչպէս և այն, թէ թիւրքերի կողմից նոր յարձակումների պատրաստութիւն է լինում։ Եւ այս բոպէիս ժողովուրդը այնպիսի լարւած դրութեան մէջ է գտնւում, որ ամենաչնչին մի երևոյթ—մի անհատի պատահական վազք, մի ճիչ, մի աղաղակ անմիջապէս առաջ է բերում ահ,—խանութներն անմիջապէս փակւում են, փախչող փախչողի է լինում։

Կառավարութիւնն սկսել է սիստիմատիկ կերպով խուզարկութիւններ կատարել հայերի տներում ու գործարաններում. Բալախանի և Բագու 15-ի չափ հրացաններ, փոքր քանակութեամբ փամփուշտներ և մոտ 10 ատրճանակներ են բռնւած. թւում է թէ խուզարկութիւնները հետևանք են մասնաւոր մատնութիւնների։

Նակաշիձէի ահաբեկիչը գտնելու նպատակով՝ ոստիկանութիւնը անտեղի և ծիծաղելի միջոցների է դիմում։ Այսպէս օրինակ՝ ինժիներ Խատիսեանի գործարանը խուզարկեցին և այդ հետևանք էր տեղական ոստիկանութեան այն մոլորութեան, իբր Խատիսեանը յեղափոխական կոմիտէի անդամ է. խուզարկուները մեծ յոյս ունէին, թէ այնտեղ կը գտնւին ինչպէս ռումբեր, նոյպէս և Նակաշիձէի ահաբեկիչը։ Եւ երբ այնտեղ մի արհեստաւոր ձերբակալեցին՝ կարծելով թէ նա է ահաբեկիչը, յայտնւեց որ նա ոչ միայն յեղափոխական չէ, այլ և հայ իսկ չէ, այլ յոյն։ Եւ այդ բաւական չէ, հեռագրական գործակալութեան կասկածելի ներկայացուցիչներն էլ այդ առիթով հեռագրեցին ամեն, տեղ թէ Նակաշիձէի սպանիչը բռնւած է...

Սա առաջին անգամը չէ, որ Խատիսեանի գործարանը խուզարկւում է։ Իր տխուր գործերով քաջածանօթ Մահմատ-Բէկովը անձնւէր լրտես—պրիստաւը մի զեկուցում է տւել կառավարութեան, որով հայոց ինտելիգէնտ շրջանից մոտ տասն հոգի՝ Խատիսեան, Դօլուխանով, Վաչեան, Դաստակեան, Ունանեան, Պարոնեան, Թաղիանոսեան, Գէնջէցեան և այլն, ներկայացւած են

իբրև յեղափոխական կոմիտէի անդամներ։ Եւ ինչպէս երևում է, այդ ծիծաղելի զեկուցումը տպաւորութիւն է թողել։ Ահա ապացոյցներ. Նակաշիձէի սպանումից մի կես ժամ յետոյ՝ երբ ժամանակաւոր Նահանգապետ Ամիլախվարի իր սվիտայով գալիս է դէպքի վայրը, նոյն տեղն են հասնում և մի քանի թիւրք ջոջեր, որոնք ցաւակցաբար գլուխները օրօրելով՝ հարց են տալիս, թէ „այս բոլորի վերջը ո՞ւր պիտի հասնի“։ Ամիլախվարին պատասխանում է.“ երբ կոմիտէի անդամներից մի քանիսը, ինչպէս Դօլուխանով և այլն, այս ոճրի տեղում կը կախուին, այն ժամանակ այս ամենը վերջ կը գտնի։“ Այս լուրը առնելուն պէս Դօլուխանով իսկոյն բողոքագիր է ուղարկում փոխարքային և ներքին գործերի մինիստրութեան։ Քաղաքում լուրեր են պտտում, որ ինքն էլ անձամբ գընում է Թիֆլիս՝ իր գանգատին ընթացք տալու համար։

Հայ-Թիւրքական „խաղաղարար“ կիսապաշտօնական կոմիտէն լուծուեց, որովհետև Գեներալ Ամիլախվարին չ՝ուզեց պաշտօնապէս սանկցիա տալ Թիւրքերը վախենալով՝ յետ քաշուեցին։

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՆԵՐ

Մայիսի 11-ին, ցերեկուայ ժամը 3-ին, քաղաքի կենտրոնում, ռումբի հարուածով սպանուեց Բագուի Նահանգապետ Իշխան Նակաշիձէն։ Դաշնակցութեան որոշմամբ էր այդ։

Արի՜ւն ընդ արեան։

Փետրուարի 6—9-ի գազանային կոտորածը, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի կրծքից ցասման աղաղակ կորզեց, չէր կարող անպատասխան մնալ Ժողովրդի կողմից։

Նա, որ կազմակերպեց եղեռնը՝ հրեշաւոր իր ծաւալով ու դաժանութեամբ, մասսային կոտորածներ ու տանջանքներ, ջարդ ու թալան, որ բարեկամաբար սեղմում էր եղեռնագործների ձեռքը՝ հէնց այն ժամանակ, երբ նրանք մահ ու աւեր էին սփռում քաղաքի մէջ՝ նա պէտք է ընկներ։

Ու ամէնքը սպասում էին վճռական հատուցման։

Երերացող գահի այդ նենգամիտ ճորան էր, որ ձգտում էր թշնամութիւն սերմանել հայ ու թիւրք ազգութիւնների մէջ՝ կասեցնելու յեղափոխական շարժումները Կովկասում։

Շրջապատելով իրեն լրտեսների ու ոստիկանների վոհմակներով, գինուորներով և կօզակներով, նա կարծում էր ապատ մնալ Ժողովրդական դատաստանից։ Իզուր։ Անյայտ վրիժառու հերոսի ուժեղ ձեռքը վերջ դրեց Բագուի սատրապի գործունէութեան ու արատաւոր կեանքին։

ԸՆԿԵՐՆԵՐ, Նակաշիձէն բախտակից եղաւ Սիպիագինին, Պլեվէյին, Բօգդանովիչին, մեծ-իշխան Սերգէյին... Ժողովրդական դատաստանը քնած չէ։

Պէտք է ընդլայնել այդ գործունէութիւնը։

Մահ Ժողովրդի հարստահարիչներին։

Մահ նրանց, որոնք կաշկանդել են մեզ քաղաքական ստրկութեան շղթաներով, որոնք պահպանում են մեր տնտեսական ստրկութիւնը։

Մահ նրանց, որոնք խաղաղ աշխատաւորի դէմ դուրս են բերում գիւղացիներ ու բանւորներ պաշտօնական համազգեստով։

Մահ նրանց, որոնք փտեցնում են բանտերում ազատութեան մարտիկներին, Սիբիր քշում նրանց։

Մահ նրանց, որոնք հալածում են ազատ և շիտակ միտքը և բանւորական դասակարգին նուիրուած յանդուգն աշխատողներին։

Մահ նրանց, որոնք ատելութիւն են սերմանում եղբայր Ժողովուրդների մէջ. նրանց, որոնք մացնում են մեր մէջ լրտեսութիւնն ու պրովոկացիան. նրանց, որոնք ստում են բացարձակօրէն, վիրևից ըէֆօրմներ խոստանալով, որոնք ձգտում են ոչնչացնել Ժողովրդական զարթն ու կիսակցութիւնը։

Մահ Ժողովրդի թշնամիներին, մահ միապետութեան,
Կեցցէ՜ յեղափոխական մարտը,
Կեցցէ՜ մասսային շարժումն ու տէռորը,
Կեցցէ՜ քաղաքական ապատութիւնը,
Կեցցէ՜ սոցիալիզմը։

ՌՈՒՍ ՍՕՑ.-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ
ԲԱԳՒԻ ԿՕՄԻՏԷ

1905, մայիս
Բագու

ԼՈՒՐԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻՑ

Բագու, 26 մայիսի

Մայիսի սկզբից սկսած՝ այստեղ մասնաւոր գործադուլներ կային։ Ապրիլի 30-ին և մայիսի 1-2-ին ընդհանուր գործադուլ տեղի ունեցաւ մայիսի 1-ի առիթով։ Նոյն ամսի 3-ին աշխատանքը վերսկսուեց, բայց մասնակի գործադուլները շարունակուեցին զանազան ֆիրմաներում։ Այդ մասնակի գործադուլները յետոյ լայնացան և ընդհանուր կերպարանք ստացան և այս անգամ Թիւրքերի նախաձեռնութեամբ։ Բանւորական կազմակերպութիւնը այդ բանում նախաձեռնութիւն չունէր։

Թիւրքական գործադուլի հետևանքով՝ ակամայից տուժեցին նոյնպէս և տեղական Թիւրք ֆիրմաներ և կապալառուներ։ Կառավարութեան թելադրութեամբ և թերևս քրիստոնեաներին պատկանող ֆիրմաների լռելեայն հաւանութեամբ՝ Թիւրք հոգևորականութիւնը, պարսկական հիւպատոսը և Թիւրք ինտելիգենցիան Բալախանիում մի շատ մեծ միտինգ սարքեցին զուտ մահմէտական տարրից կազմուած, որի ժամանակ աշխատում էին համոզել Թիւրք բանւորներին՝ թողնել գործադուլի միտքը և վերսկսել աշխատանքը։ Այդ օրն իսկ մի քանի տեղերում աշխատանքը վերսկսուեց. իսկ յաջորդ օրը նոյն մահմէտականների ճնշման տակ՝ նաւթահանքերում, գործարաններում, ամէն տեղ, աշխատանքը իր սովորական կերպարանքն ընդունեց։

Վերսկսած աշխատանքը թերևս երկարատև լինի, որովհետև գործադուլ անողները նիւթապէս տուժեցին։ Նրանք և ոչ մի կոպէկ չստացան գործադուլ արած օրերի համար, մինչդեռ նախորդ գործադուլների միջոցին չ՝աշխատած օրերի վարձը լիովին ստանում էին։ Արդիւնաբերողները որոշեցին այսուհետև ոչինչ չտալ գործադուլ անողներին՝ աշխատանքը թողած ժամից սկսած. իսկ Թիւրքերի ճնշումները բանւորների վրայ աւելի քան ուժ կրտայ աշխատանքը յարատև շարունակելու։

Նախիջևանի գաւառում տիրող սարսափների լուրը ցնցեց և այստեղի հայութիւնը. գաւառացիներից շատերը գործերը թողած՝ խումբ-խումբ դիմում են դէպի իրենց հայրենիքը, գոնէ իրենց տանը, ընտանիքի և երեխաների հետ միասին կրելու դաւաճան ձեռքերով կազմակերպուած այս դժբախտութիւնը։

Մտքերը խիստ գրգռուած են. շրջող զանազան լուրերի ազդեցութեան տակ՝ միշտ կասկած կայ, որ նորանոր դէպքեր են տեղի ունենալու այստեղ։ Մի քանի օր է, ինչ օրական 2-3 անգամ բոլոր խանութները յանկարծակի փակւում են և ամէն մարդ փախուստի է դիմում։ Հայերից պակաս չեն վախենում և Թիւրքերը։

Այդպիսի մի փախուստի ժամանակ՝ մի գօրօդօվօյ սպանեց անյայտ մի անձի ձեռքով։ Սպանողի փոխարէն ձերբակալուեց մի անմեղ հայ տղայ։ Թիւրքերը սարսափած՝ թէ այս անգամ յարձակումը հայերի կողմից է, սկսում են փախչել. Նրանցից մի քանիսը ապաստանեցին հայերի տներում։

Հայ բուրժուաներից մի քանիսը դիմեցին Նահանգապետ Ամիլախվարիին՝ բողոքելով, թէ ինչո՞ւ ամէն մի դէպք վերագրւում է հայերին, առանց նախօրօք ստուգելու։ Ամիլախվարին հետեւեալ լակոնական պատասխանն է տալիս. „Ձեր ասածը քննութիւնը միայն կը պարզի“։ Ի դէպ. Նահանգապետ Ամիլախվարին առհասարակ թէ իր խօսակցութիւններով և թէ իր վերաբերմունքով աննպաստ դիրք է բռնել դէպի հայերը, մինչդեռ դէպի թիւրքերը, ընդհակառակը, շատ սիրալիր։

Քաղաքի մէջ հետեւեալ անեկդոտն է պտտում իշխան Ամիլախվարիի մասին։ Որպէս թէ վերջին օրերս մի քանի ազդեցիկ թիւրքեր նրա մօտ են գնացել և առաջարկել իրենց ծառայութիւնը՝ հայերի դէմ մի նոր յարձակում կազմելու համար։ Իշխանը շատ սիրով ընդունում է նրանց և ապա աւելացնում. „Դուք քիչ էք, գնացէք և ձեր բոլոր համախոհներով միասին եկէք“։ Քիչ անցած աւելի քան 30 հոգի ժողովւում ու գնում են մօտը։ Դրանց անուններն ու ազգանունները արձանագրելուց յետոյ՝ Ամիլախվարին յայտարարում է. „Այժմ կարող էք հեռանալ, բայց գիտցած եղէք, որ եթէ ուէ դէպք պատահի քաղաքում, ձեզ բոլորիդ կախել կըտամ հրապարակի վրայ“։ Երանի ճիշդ լինէր այդ անեկդոտը...

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՌԻՒ

ԿՌԻՒՆԵՐ
ՍԱՍՆՈՅ ԵՒ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շար. № 6-ի եւ վերջ)

18. ՇԷՅԽ-ԻՒՍՈՒՖԻ ԵՒ ՇԱՄԻՐԱՄԻ ԿՌԻՒՆԵՐԸ

Յուլիս 17-ին նոր կռիւ մը կըսկսի Շէյխ-Իւսուֆ գիւղին մէջ։ Երբ զօրքերը գիւղին վրայ կ'ուզեն յարձակուիլ կողոպտելու համար, մի քանի Ախչանցի կտրիճ հայեր և տեղացիներ, հրացանը ձեռք՝ դուրս կուգան գիւղը պաշտպանելու։ Դիմադրութիւնը շատ յաջող կ'անցնի մինչև կէսօր։ Բայց կէսօրէն վերջ թշնամին իր ուժերը շատցնելով՝ աւելի ամուր կը պաշարէ գիւղը։ Կռւողները կը քաշուին եկեղեցու գլուխ և այնտեղէն կը շարունակեն կռիւը, աւելի վերջ պարտաւորուած կը լինին եկեղեցիի մէջ պաշտպանուելով՝ շարունակել դիմադրութիւնը, որը կը տեւէ սակայն մինչև ժամը 2. փամփուշտի պաշարը վերջացած լինելով՝ կը դադարեցնեն դիմադրութիւնը։ Թշնամին խոտեր բերելով կ'այրէ եկեղեցին, ինչպէս և մէջը ապաստանողները, թւով 12 հոգի։

Այս կռիւներէն յետոյ Դաշտի մէջ բոլորովին կը դադրի երթեւեկութիւնը. Թիւրքերը չեն համարձակիր դուրս գալ ֆէդայու ահէն, իսկ հայերը դուրսը չեն երեւար, վախնալով, որ մի գուցէ Թիւրքերու վրէժխնդրութեան ենթարկուին։ Կառավարութիւնը ամենամեծ միջոցներ էր ձեռք առեր ֆէդայիները ճանկը ձգելու։ Բաղէշի կուսակալ և Ֆէրիկ պէյ շւարած մնացեր էին ըսելով. „Եարաբ ալլահ, նէ՞րէ կէթտի շու Անդրանիկ“ — Ո՜վ Աստուած, արդեօք ո՞ւր գնաց այս Անդրանիկ — և 1000 ոսկի կը խոստանային անոր, ով գլուխը կը բերէր։

Կառավարութեան հետապնդութիւնը աւելի քան երբ և է խստացած, իսկ մերոնց ռազմամթերքի պաշարը բոլորովին սպառւած էր, այլեւս անկարելի էր Անդրանիկի համար սպասել ու կռիւը շարունակել։ Ամէն անգամ որ կռիւ կը պատահէր, կռուելէն յետոյ կ'արձակէին զինուորներէն մի քանիսը և կը վերցնէին անոնց հրացանները, որոնք այլեւս անպէտք կը դառնային փամփուշտի պակասութեան պատճառով։ Այսպէս կռւողներու թիւը կը սահմանափակուէր օրէ օր։ Անդրանիկ հաւաքելով իր վերջին զինուորները, կը հեռանայ դէպի Ախլաթ և օր մը կը պատսպարւի Շամիրամ գիւղին մէջ։

Շաբաթներու և ամիսներու շարունակական լարուած դրութիւնը, օրերով քաղցածութիւն և անքնութիւնը, սպառած էին մեր մի բուռն հերոսներու կենսական ուժերը. անհրաժեշտ էր քիչ մը հանգստանալ, կազդուրուիլ։ Հանգստանա՞լ... Բայց այլ կերպ կը տնօրինէ յեղափոխական Աստուածը։

Սծվակի աղա՝ Ալի բէկին իմաց կուտան, որ Սերոբ-Աղբիւրի մատնիչները կախող Սեպուհը ընկերներով եկեր է Շամիրամ. Նա առանց իմանալու որ Անդրանիկն ալ եկած է, մատնիչներու վրէժը լուծելու համար կը վերցնէ հետը 150 թիւրք զինուորներ ու կը դիմէ դէպի Շամիրամ, Ալլահի յաջողութեամբ և սուլթանի շնորհիւ՝ բռնելու Սեպուհը։ Երբ Ալի բէկի լուրը կը հասնի Շամիրամ՝ անմիջապէս մերոնք կը պատրաստուին կռւի. Աստուր, Սօղօն, և փոքրիկ Պետրոս կը վազեն Ալի բէկի դիմաց և զայն իրեններու հետ գնդակներու առջև ձգած՝ կը հանեն Նեմրութ լեռան թեւերու վրայ։ Եկեղեցու կտուրին վրայ և գիւղի չորս կողմը կը պատրաստուին դիրքեր. գիւղի հիւսիսային կողմը, բլուրներու վրայ, ուր կան հին բերդի աւերակներ, դիրք կը բռնէ Գէորգ Չաւուշ 10-13 ընկերներով, Մուրատ կը բռնէ երկրորդ դիրք, Անդրանիկը՝ երրորդ, իսկ Սեպուհն՝ չորրորդ։ Եկեղեցու կտուրը կը բարձրանայ Սօղօն, Օհանէս, Եղօն և մի քանի ընկերներ, Սմբատ և Մուսօն բռնած էին ջրի վերև, որպէս զի թշնամիներ չկարողանային օգտուիլ ջրէն։ Դրօշակը կը ծածանէր։

Նախ քան կռիւ սկսիլը՝ Սմբատ գիւղէն կը հաւաքէ ուտելու պաշար, բոլոր կուժերը կը հաւաքէ, ջրով կը լեցնէ և կանանց ու աղջիկներու ուսերով դիրքերը կը փոխադրէ. մանաւանդ աչքի կ'իյնար այս վերջիններու ոգևորուած տրամադրութիւնը. մի կողմէն արագ փոխադրութիւն կ'ընէին, միւս կողմէն ասկէ անկէ ձայն կ'ուտային. „Դէ՛, տղերք, կռւէք, ձեր հոգուն մատաղ. մէկ էս քրդուն, Ալի բէկին լաւ խրատ տւէք, որ կեանքի մէջ չմոռնայ“։ Ամէն կողմերէ օգնութեան հասնող Թիւրքերու և քիւրդերու բազմութիւնը գնալով կ'աճէր, սալաւաթ կարդալով առաջ կը խաղար։ Թշնամիները գլխաւորապէս իրենց ուշադրութիւնը դարձուցած էին ջրի վրայ, ուր Սմբատը կը կռւէր ընկերներով։ Կռիւը հետզհետէ տենդային կը դառնար. Սմբատ որոշեր էր մինչև վերջին շունչ ջուրը պաշտպանել, որովհետեւ եթէ թշնամիներ խլէին ջուրը, մերոնք պարտաւորուած՝ պիտի չկարողանային

ամուր մնալ գիրքերու մէջ և գիւղը շուտով պիտի յանձնէին Թշնամին գրոհ կուտայ մի քանի անգամ, բայց ամէն անգամ՝ ալ կը հանդիպի ուժեղ դիմադրութեան ու ետ կ՚ընկրկի. կատաղի կռիւի միջոցին Սմբատ կը կորսնցնէ ընկերներէն երկուքը։ Կռիւը ոչ նուազ սաստիկ կը լինի նաև միւս գիրքերի մէջ, որոնց առջև շարունակ կը թափուէին թշնամիներու դիակները։ Երիկուան ժամը մէկին մերոնք կը պայթեցնեն ռումբ մը. թշնամիները անոր ձայնը կը լսեն և „Բաղէշէն օգնութիւն է եկեր, թնդանօթ է եկեր“ ըսելով իրար կը խրախուսեն ու նորէն առաջ կը նետուին. բոպէ մը կռիւը նոր թափ կը ստանայ, բայց քիչ վերջ հետզհետէ կը սկսին մեղմանալ հրացանի ձայները ու վերջապէս կը լռեն։ Թշնամիները կը քաշուին ամբողջովին՝ կռիւի տեղը թողնելով 70 սպանուած։ Մերոնցմէ սպանուեցաւ Փոքրիկ Պետրոսը և վիրաւորուեցան ուրիշ մի քանիսը։

19. ԱՂԹԱՄԱՐԻ ԵՒ ՎԱՆԻ ԿՌԻՒՆԵՐԸ

Խումբը գիշերուն կը մեկնի դէպի Պատաման, այդտեղ կը բռնէ քրդերու երկու նաւեր և կ՚ուղևորուի դէպի Ախթամար. ճանապարհորդութիւնը կը տևէ երկու օր։ Այդ երկու օրուան ընթացքի մէջ խմբի ուտելիքն եղած է 3 պարկ սիսեռ, որ կը գտնուէր նաւի մէջ. տակաւին Աղթամար չհասած՝ խումբը դուրս կուգայ Ցէվէ-Պոյուն ու մի քիչ կը հանգստանայ։ Այդտեղ կը բռնեն նաև մի ուրիշ նաւ, որի մէջ կը գտնուէին մի քանի քրդեր. հետևեալ օրը խումբը հեծած 3 նաւերու վրայ՝ կը հասնի Ախթամար։ Այնտեղ կը սպասեն եօթն օր։ Գէորգ Չաւուշ նորէն յետ կը դառնայ դէպի Պաշտ (օգոստ. 6)։

Երբ կառավարութիւնը կ՚իմանայ, որ յեղափոխականներ կը գտնուին Աղթամարի մէջ, նաւերով զօրքեր ու թնդանօթներ կ՚ուղարկէ, կուսակալ և Էրբիանը-Հարպ մի մակոյկով առաջ ընկած՝ կղզին ռմբակոծելու հրահանգներ կուտան։ Գէգայիները մի անգամ ալ կը բարձրացնեն դրօշակը, որ իրենց այնքան կռիւներուն վկայ էր եղած և գնդակներ կը տեղան նաւերուն վրայ. կռիւը կը տևէ երկու օր։ Թշնամին կ՚արձակէ 45 թնդանօթ. անոր նպատակն էր վնասել գլխաւորապէս նաւերը, որպէս զի յեղափոխականներու ազատութեան յոյսը կտրէ. բայց մերոնք նաւերը քաշեր էին ծովեզերքի խորշերու մէջ և կարմիր կուլպաներով (թաղիք) ծածկեր էին, այնպէս որ անոնք ժայռերու մէջ աննկատելի կը մնային թշնամիէն։ Անդրանիկ լաւ միջոց էր գտեր թշնամու հեռաւորութիւնը չափելու և ատոր համաձայն հրացանները ուղղելու։ Թընդանօթի բերնէն ծուխ բարձրանալէ մինչև ձայնի լսելը կը հարէր, եթէ ձայնը կը լսէր մինչև 10 հարելը, կը նշանակէր, որ թշնամին կը գտնուի 1,000 քայլի վրայ, եթէ ձայնը կը լսէր մինչև 17 հարելը, կը նշանակէր, որ թշնամին կը գտնուէր 1,700 քայլի վրայ, և այսպէս կղզիէն արձակուած գնդակները երբէք չէին վրիպեր նպատակէն։

Երբ կղզու մէջ ուտելու պաշար վերջացաւ—և պէտք է ըսել որ կաթողիկոսական տեղապահը այնպէս էր սարքեր, որ կղզին ապաստանողները աւելի երկար մնալու համար պաշար չ՚ունենային, նախորդ օրերը դուրս տեղափոխելով վանքի մէջ գտնուած ալիւրը — խումբը կղզու մէջ թողնելով երկու դրօշակներ՝ դուրս եկաւ։ Կանգուն մնացած դրօշակները երկու օր ալ կը խաբեն թշնամիները, որոնք ամենայն եռանդով կը շարունակեն ռմբակոծել կղզին, կարծելով թէ ֆէդայիները տակաւին ներսն են, մինչև որ ներսը եղող միաբանութիւնը նշաններով իմաց կուտայ դուրսը՝ ոչ ոք չլինելուն համար։ Այդ ատեն թիւրք զինուոր մը ամենայն քաջութեամբ նաւ կը մտնէ՝ առաջինը կղզին գնալու համար. հետևեալ օր իբրև վարձատրութիւն իր „անվախ անձնուիրութեան“ կրստանայ տասնապետի աստիճան. . .

Վանայ մէջ խումբը երկու անգամ կը նկատուի. առաջին անգամ անփորձ կ՚անցնի. երկրորդ անգամ, երբ գիշերը կը տեղափոխուէր, գիշերապահ զինուորներու կը հանդիպի։ Թիւրքերը կը հետևին և կը պահանջեն անձնատուր լինել, բայց երբ իրենցմէ մէկը կրսպանուի և մի ուրիշն ալ կը վիրաւորուի՝ կը թողնեն ու կը փախչին։ Հետևեալ օրը սարսափ տիրեց ամբողջ քաղաքի մէջ. թիւրքերը կը յարձակուին հայերու վրայ և տեղացիներէն կրսպանուին մօտ 60 հոգի. կ՚այրեն մի տուն։ Խանութները ամբողջապէս կը փակուին ու մի քանի օր երթևեկութիւնը մը կ՚դադրի։

20. ԿԾՎԱԿԻ ԿՌԻՒՆԵՐԸ.

Գէորգ Չաւուշ Աղթամարէն դուրս գալէն յետոյ ծովի վրայ փոթորկի կը բռնուի. նաւը իր ուղղութիւնը կորցրած՝ կ՚երթայ դէպի Ակլաթի եզերքները։ Երկար յոգնութիւնէ յետոյ՝ հազիւ կը յաջողի նաւը դուրս բերել Կծվակի մօտերը։ Գէորգ Չաւուշ խմբով դուրս կ՚ուգայ ափը և քարքարուտներու մէջէն կը շարունակէ ճամբան։ Մութին մէջ իրենց դիմաց յանկարծ կը ցցուին սև սև շարժուող սաւերներ։ Ատոնք կառավարական զօրքերն էին, որոնք պահապանութիւն կ՚ընէին այդ կողմերը։ Երկու կողմէն ձայն կուտան իրարու և հրացանաձգութիւնը կը սկսի։ Մերոնք թէ կը կռուին և թէ կը յառաջանան, մինչև որ կ՚անցնայատանան գիշերուան մթութեան մէջ։ Կռուի տագնապի մէջ ընկերներէն ոչ ոք չի նկատեր ետ մնացող Ապտուլը, որ ծանր կերպով կը վիրաւորուի ու վար կ՚իյնայ։ Նկատելով ինքզինքը միայնակ և մահամերձ վիճակի մէջ, կը կոտրէ հրացանը ու ծովը կը նետէ, ապա ինքն ալ անոր ետևէն։ Մեր նահատակ ընկերը նախորդ շատ մը կռիւներու մէջ իր քաջութեամբ միշտ յայտնի եղած էր։ Թիւրքերէն կրսպանուին 4 հոգի։

ԹԵՐԹՕՆ

ՅԱՐԳԱ՛ՆՔ ՔԵԶ

Յարգա՛նք քեզ նահատակ ժողովուրդ։

Ո՞վ չափեց երբևիցէ քո տառապանքի անդունդները. ո՞ր սգաւոր կարապը եկաւ մի օր յուզելու հոգուդ խորունկ ցաւի խորունկ լճերը, ուր եռում են պղտոր ալիքները անէծքի մրմունջով։ Ինքդ միայն գիտես անօրինակ ցաւիդ մեծութիւնը. ինքդ միայն ես վարում քո անդեկ ու ալեծուփ նաւը դէպի անծանօթ հորիզոններ, ո՞վ դու ծովերի մոլար, տանջած ճամբորդ, մրրիկների յաւիտենական ուղեկից. յարգա՛նք քեզ։

Հազար տարիների արիւնի մառախուղի միջից դու քայլում ես անյողդողդ, յամառ ու վսեմ դէպի մի վեհագոյն, մի սքանչելի նպատակ, գրաւիչ՝ որպէս փարոս, դիւթական՝ որպէս ժպիտը կոյսի. քայլում ես հևիհև, վիրաւոր,

խոշտանգուած, քո հսկայ թիկունքին կրելով մի բեռ, որի ծանրութեան տակ այնքան ազգեր լացով խորտակուել են ու կորել, որպէս մրրիկների վարած փոշու ամպեր. յարգա՜նք քեզ:

Հազար տարի բարձրից ընկնող կաթիլները կամաց-կամաց կրծում են հսկայ ժայռը և յորձանքներին յանձնում. լեռներ են փուլ գալիս դարերի բոյթ երկունքից, իսկ դու, մարտիրոս ժողովուրդ, քո գլխին տեղացող անթիւ հարուածների տակ դեռ քայլում ես պնդացած, անողորմ անապատների միջով, ուր օձերը իրենց թունաւոր հեքով լիզում են արիւնոտ գարշապարդ, ուր փշերը յօշոտում են ներբանդ. քայլում ես դէպի այնտեղ, ուր մղում է քեզ քո անօրինակ ճակատագիրը. ո՜վ գիտէ, ո՛րպիսի փառքի, կամ ո՛րպիսի նոր պայքարների համար. յարգա՜նք քեզ:

Այնքան դարեր վառուող խրճիթներից բարկ ու գորշ ծուխը՝ մորթոտուող զաւակներից արիւնով ու մայրերի անէծքով բեռնաւորուած գնում է սևով խարանելու երկնքի ճակատը. արևը յոգնեց շրջան անելով քո արիւնոտ հորիզոնով, և լուսինը դողդողալով քաշում է իր գունատ ցոլքերը քո արեան երեսից, և դու հեծեծանքդ խեղդած՝ քո հսկայ ցաւը հսկայ կրծքիդ տակ շղթայած, մենաւոր ու հալածական գնում ես անշեղ խաւար ճանապարհներով, հայեացքդ միշտ դէպի հեռուն, ուր ծածկուել է արշալոյսը և որ պիտի ծագի, պիտի ծագի մի օր. յարգա՜նք քեզ:

Հազար ձեռներ կան հոգուդ հսկայ թռիչքը սանձելու. հազար ճիրաններ՝ ազատութեան քո վարդագոյն երազները բզկտելու. կեանքդ պատրանքներով անցաւ և հաւատը քեզ չթողեց, թէ կան արշալոյսներ, որոնք պիտի փայլ տան մի օր քո մռայլ հայեացքին. յոյսիդ փթթած վարդերը հազար անգամ խամրեցին խորշակների երեսից, և դու չես յոգնում նորերը տնկելուց, ո՜վ դու մռայլ ու համր պարտիզպան: Խաւար ու խեղդող ճանապարհիդ վրայ քեզնից անբաժան, քեզ հետ շղկապուած քայլում է չարիքը, հազարգլխանի հրէշը, և քո շուրջը՝ այրերի մէջ ոռնում են քաղցած գազանները թափառական հողմերի հետ լոկ անտառներն են մութ գիշերներին հեծեծում ու լալիս քո հսկայ ցաւը. յարգա՜նք քեզ:

Բրոնզէ ու երկաթէ սահմաններ կան զաւակներիդ իրարից բաժանելու, նրանց հոգեւոր կեանքի ամբողջական թափը, ցեղիդ ստեղծագործող հանճարի թռիչքը փշրելու համար: Պողպատէ շղթաներ կան բազուկներդ պրկելու և ոտներիդ վերելքը խափանելու համար: Երբ գալիս է կարմիր ոճիրը երկգլխանի արծուի թևերի վրայ կամ կիսալուսինը պարզած՝ գալիս է սանձարձակ ու կատաղի պղծելու քո չարատանջ մարմինն, մահացու հարուածը դրոշմելու քո խոհուն ու յոգնած ճակատին, սահմանները ջնջւում են և Մասիսից՝ Գրգուռ ու Նպատ, Արագածից՝ Վարագ ու Սիփան, դաշտ ու ձորեր ողջ հեւում են արիւնոտ մշուշի մէջ. ոճիրը քրքջում է երկնքի երեսին և դու դարձեալ քայլում ես. յարգա՜նք քեզ:

Ասա՛, կենդանի մարտիրոս, ո՞վ դրեց քո հոգում այդ զարմանալի բոցը, որ քո խանդի աղբիւրն է ցաւի ու սևի օրերում. ո՞վ տնկեց քո կրծքի տակ խորունկ հաւատի այդ հսկայ ծառը, որի վրայ այնքան սգաւոր թռչուններ են թառել: Թէ նա մի բարի աստուած էր, ինչո՞ւ կապեց քո սրունքներին ռռնացող ցեղերը, կիզիչ անապատների խուժանը, որ անկարող է ըմբռնել քո մեծ երազները, գեղեցկի ու բարւոյ քո հուր տենչերը, որոնք հրդեհում են հոգիդ ուժգնօրէն:

Քո տառապանքի ու կսկիծի մեծութիւնից մայր երկիրը քրքրուած ոտներիդ տակ զառանցում է ցաւագինօրէն. Լսիր նրան տանջւող, մարտիրոսուող ազգ, նրա մրմունջների, նրա լացի մէջ բողոքի դառն շեշտ կայ. այնքան դարեր դու հերկեցիր, բեղուն դարձնելու նրա կուրծքը, և ոճրագործները պղծեցին նրան: Այժմ ականջ դիր, իւրաքանչիւր փշրուած հասկ, տրորուած ծաղիկ, բողոքում է քո դէմ, քո խաղաղ, անձնուրաց, արինաքամ առաքինութեան դէմ, որ քո շուրջը ոչ ոք չի հասկանում, ոչ ոք չհասկացաւ երբեք: Ա՜հ այդ առաքինութիւնը, որքան և վսեմ լինի նա, թող այն աստուածներին, ոտքի ել և զա՛րկ, զա՛րկ թափով-ողջ աշխարհն է զարկում. վա՜յ նրան, ում առաքինութիւնը մարտական չէ, ում բռունցքը չի բարձրանում հարուածելու արիւնածարաւ, անողորմ թշնամուն:

Դարձեալ յարգա՜նք քեզ. յարգա՜նք քո արիւնին, քո ցաւին, քո լաց ու արցունքին, յարգա՜նք նոյնիսկ քո հսկայ համբերութեանը, որ քո վահանն եղաւ սև օրերում, յարգանք քո Մեծ Հաւատին դէպի բարւոյ յաղթանակը:

Բայց բաւակա՛ն է: Դարերի հարկը թող դարերը տանեն: Թշնամին չափազանց անողորմ է, բիրտ ու ոճրագործ, որպէս զի համբերութիւնը շարունակի առաքինութիւն մնալ: Վեր կա՛ց ու զա՛րկ, զա՛րկ ուժգին և թո՛ղ հազար տարիների մեռելների ոսկորները դողան հարուածներիդ շռինդից: Զա՛րկ, երբ հալածում են քեզ, զա՛րկ, երբ փակում են քո փառաւոր ընթացքը, զա՛րկ, երբ մերժում ու հեգնում են քո պարզած ձեռքը, զա՛րկ շարունակ, մինչև կարմիր ոճրի նողկալի քրքիջը խեղդւի, մինչև արդարութեան ու ճշմարտութեան վսեմ գործը յաղթանակի:

Եւ այն ժամանակ հաւատա՛, նահատակ ժողովուրդ, արիւնարբու թշնամիդ անգամ ծունկ կը չոքէ ու կը կոչէ „Յարգա՜նք քեզ“...

ՂԱՐԻԲ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՀՐԱՄԱՆ

ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

—

„Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը սրանով յայտնում է բոլոր ստիկաններին, ստրաժնիկներին, ստիկանապետներին, գաւառապետներին, ժանդարմներին և խուզարկու ոստիկանութեան անդամներին, որ պատահեալ նրանցից իւրաքանչիւրը անխնայ կերպով կոչնչացւի, եթէ համարձակւի հայերի ձեռքից զէնք խլել, խուզարկութիւններ կատարել կամ բանտարկել այդ նպատակով: Թող նրանցից իւրաքանչիւրը նախ քան այդ տեսակ գործ սկսելը յիշէ Բաքւի նահանգապետ Նակաշիձէին, Գանձակի փոխ նահանգապետ Անդրէեւին, գաւառապետներ՝ Բօգուսլաւսկուն, Շմերլինգին, Պալովին, ոստիկանապետ Սախարովին, պրիստաւներ՝ Նաշչանսկուն, Ջավախովին, Շումակեվիչին, Տէր-Սահակովին, ստիկան Սերգօին, դռնապան Շէկօին և ուրիշ շատերին, որոնք Հ. Յ. Դաշնակցութեան վճռով մահուան պատժին են արժանացել: Փոխարքայի կողմից 25 ր. ընծայ *) կամ յեղափոխական գնդակը—ահա թէ ինչ քան

*) Մօտ օրերս Թիֆլիսում մի ոստիկան մի հայի զինաթափ անելիս վիրաւորւում է. փոխարքան այդ բանը լսելով 25 ռուբլի ընծայ է տալիս:

պէտք է ընարել։ Փոխարքան խոստանում է այդ ձևով վնասուածների ընտանիքներն ապահովացնել։ Դա թեթևացնում է մեր դարձ, որովհետև միայն անմեղ ընտանիքների անօգնական դրութիւնը կարող էր դողացնել յեղափոխականի ձեռքը։ այժմ՝ վերացրած է այդ արդելքն էլ"։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. Պ. Կ. ԿՕՄԻՏԷ

Այդ ծանուցման կցած է հետեւեալ պաշտօնական ազդը.

„Սոցիալիստ-յեղափոխականների Բագուի կոմիտէն միանում է Հ. Յ. Դաշնակցութեան վերեւի ապդարարութեան եւ որոշում է՝ ներգործական մասնակցութիւն ընդունել՝ հայերից զանգ իսլոգ մանդատների, ոստիկանների եւ այլ պատասխանների պատժելու գործում"։

ՍՕՑ.-ՅԵՂ. ԲԱԳՒԻ ԿՕՄԻՏԷ

1905, 31 մայիսի

ՆՈՐ ՓՈԽԱՐՔԱՆ

Հայ ժողովուրդ,

Միապետի ոտարապար դալիս է։

Դեռ բռնակալի դահի տակի տակ Միապետի նոր փոխարքան մշակել է մի շարք միջոցներ, որոնցով ուզում է խաղաղացնել Կովկասը։

Մի երկու վրացիական նահանգների համար զեմստվո տալ, հայերի եկեղեցական կալուածները դուրս եւ դպրոցները վերադարձնել, մահմէական մզկիթների վակուֆ կալուածները կրկին տալ հոգեւորականութեան ձեռքը, — ահա այն միջոցները, որոնցով ուզում են խաղաղացնել Կովկասը։

Ոչ, դա խաղաղացնել չէ, այլ խաբել։

Ամբողջ Կովկասը հրդեհուած է. հայ ու վրացի 3 միլիոն ազգաբնակութիւնը կեանքի ու մահուան խնդիրներ է դրել, արմատական փոփոխութիւններ է պահանջում ներկայ բռնապետական կարգերի, իսկ նոր փոխարքայ Վ.օրոնցով-Դաշկովը իր երեք օգնականներով գալիս է մեզ խաբելու զանազան ողորմելի ու ջրի խոստումներով։

Այն ժամանակ, երբ մենք, Կովկասի կուլտուրական ժողովուրդներս, պահանջում ենք Կովկասի համար լիակատար ինքնավարութիւն, — ճիշտ այդ ժամանակ բռնակալի նոր ծառան նախ ուղարկում է մեզ հաղարաւոր կոզակներ եւ կոզակների եռեւից ինքն է ճանապարհւում, ձեռքին բռնած ճիթենու շինծու եւ կեղծ ճիւղը՝ իբրև նշան հաշտութեան։

Հաշտուեցեք, ասում է նա, որովհետև՝ վրացիներ, ձեզ տալիս եմ մի ողորմելի զեմստվո, որից Ռուսաստանի ներքին նահանգները զզուած են, որովհետև այդ գիւղական ինքնավարութեան գլխին դրուած է ադմինիստրացիայի և ժանդարմերիայի հրեշաւոր կամայականութիւնը։ Հայեր, հաշտուեցեք, բղաւում է նա Պետերբուրգից, որովհետև ձեզանից խլուած թիեղեցական կալուածների, դուրս եւ մի երկու ֆիսական դպրոցների բռնաբարման բարձրագոյն հրամանները կամ օրէնքները խոստանում եմ վերադարձնել տալ...

Դա ծաղր է, դժոխային ծաղր ապստամբութեան ներքին ապատագրութեան դրօշը պարզած ժողովուրդների համար։

Եւ գտնուեցին հայ ու վրացի հասարակութիւնների միջից ողուններ և ողորմելի գրչակներ, որոնք այդ նոր ստոր ապի ջրի խոստումները մեծ շնորհ համարեցին, ներբողներ, գովաբանական յօդուածներ նուիրեցին։ Եւ գտնուեցին հայ բուրժուաներ, վրացի ազնուականներ ու երկու ազգի հոգեւորականներ, որոնք հրճուեցին, նոյն իսկ պատրաստութիւն տեսան ու դեռ տեսնում են՝ նոր փոխարքային հանդիսաւոր ընդունելութիւն անելու։

Ժողովուրդ, հարկերի բեռի տակ հեծող, սակաւահող, մայրենի լեզուից զրկուելու դատապարտուած, ազգային ինքնասիրութիւնդ վիրաւորուած, հայ ժողովուրդ, մի՞թէ դու թոյլ կը տաս, որ ողուներն ու հոգեւորականները քո անունից խունկ ծխեն բռնապետի նոր ապստաւորին և քո անունից նրան ընդառաջ գնան ու փառքով ընդունեն։

Ոչ մի ընդունելութիւն դու չես կարող անել քո բռնաւորի, հարստահարողի և կեղեքողի ներկայացուցչին։ Դոնդուկովներ, Շերեմետեվներ, Գոլիցիններ են եկել և գնացել։ Ամենքն էլ եկել են բազմաթիւ խոստումներով, ամենքն էլ խաղաղութեան պատգամներ են բերել հիւսիսի բռնակալի որջից։ և ժողովուրդը խաբուած այդ խոստումներից՝ ողոմանաներով է ընդունել նրանց, բայց վերջը... վերջը յուսախաբուած՝ նզովքով ու անէծքներով է ճանապարհ դցել նրանց։ Դեռ թարմ են մեր յիշողութեան մէջ այդ արիւն արցունք լցացնող օրերը և կրկին խաբուել անկարելի է։

Մենք պահանջում ենք, որ մեր երկրի օրէնքները ժողովուրդը ինքը որոշէ, մեր երկրի օրէնքի բախտը ժողովուրդը ինքը տնօրինէ և ոչ թէ Պետերբուրգից եկած Սատրապները։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿՕՄԻՏԷ

Հայ ժողովուրդ,

Ահաւոր Կովկասը ընդունում է փոխարքայ Վ.օրոնցով-Դաշկովին։ Մենք համոզուած ենք, որ հասարակութեան այլասերուած և լպիրշ մասը քսու և զազրելի ժպիտը երեսին, իջնելու է փողոցները՝ դիմաւորելու համար այլանդակ միապետութեան նոր գործակալին։ Բայց ողջամիտ մասսան անկասկած գիտակցելու է, որ խաբելու չէ և սեւ ապատելիք չպէտք է ունենայ համաշխարհային ժանդարմ և ժողովրդների դահիճ միապետի դերակատարից։ Հասարակութեան գիտակից մասը պիտի սթափի և հեռու մնայ „ավանտով" յարգանքներ շռայլելուց։ Թող նա գիտենայ, որ ժողովրդեան խոցերը թարմ են և խորը, որ կիսատ-պռատ շնորհակալութիւններով և ողորմութիւններով հնարաւոր չէ նրան հանգստացնելը։ Պէտք է կռուել և կռուով ստանալ սեփական վիճակը տնօրինելու իրաւունք և ոչ թէ թոյլ տալ, որ ուրիշները տնօրինեն։ Ուրեմն ըմբռնիր իրականութիւնը, լարիր ուժերդ, պատրաստուիր և յարձակուիր թափով ախոյեանիդ վրայ, որ դարերով ծաղրեց տգիտութիւնդ, ճնշեց, ծծեց, արիւնաքամ արաւ քեզ և լցրեց քո համբերութեան բաժակը։

Կորչի՝ միապետութիւնը։

Կեցցէ՝ Կովկասի Ռամկավարական Ֆեդերացիան։

Հ. Յ. Դ. VI ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ *ստացած է՝*

Ռուսաստան. — „Դրամ" կոմիտէէն 105,000 ֆրանք։

Գերմանիա, Բերլին. — Գերմանական Սօցիալ-դէմոկրատ կուսակցութենէն նպաստ՝ 500 մարկ։ Դարձշղատէն՝ Շ. Ն.-ի ձեռքով ի նպաստ երկրի կուսողներուն 7 ֆրանք։

Ընդամէնը 105,619 ֆրանք։

ՆՈՐ ԱԻԱՆԻ *կոմիտէն՝*

1904 թ. — № 1՝ 250 ռուբլի, *Ծաղիկ խմբ.* 35. 33, *Ցաւ* 50, *Ս-երից* 500, *Անդրանիկ խմբ.* 18. 50, *Կռունկ* 13, *Գիւղացի* 9, *Ցոյս* 6, *Զ. Գ.* 200, *Բ-երից* 200, *Զ.* 150, *Ծերունի* 500, *Ջ. Ղ.* 100, *Գ.* 100, *Վ-երից* 250, *Ա.* 100, *Գ.* 100, *Թ.* 1000, *Գ. Բարօն* 500, *Խ. Ամիր* 50, *Մ. Այւից* 150, *Պ. Թ.* 500, *Ց. Թ.* 500, *Մ. Թ.* 3000, *Ա. Թ.* 3000, *Աք. Գարից* 200, *Բաո-Ջաից* 200, *Բաշ-երից* 200, *Ցոյս խմբ.* 14, *Ե. Ա.* 150, *Ս. Բրօնից* 500, *Թեւ սարից* 100, *Անյայտ շահից* 500, *Մանաքից* 100 *ռ.*: *Գումար* 13,245 *ռ.* 83 *կ.*:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ *կեդր. կոմիտէն՝*

(*Շար. No* 6-*ի*)

№ 23-ով *հանգանակուած.*—

Փիլիպ, Աւարայր, Աւետիսից 50-*ական ղրուն, Գուզան, Անծնէէր, Ոմն, Միութիւն, Դահիճ* 20-*ական, Մաթի* 25, *Խունխոր* 30, *Շիրւան* 35, *Անուն, Ասլան, Ալէքսան, Մէկը, Ոմն Բ. Մ., Ոմն, Նունուֆար, Ամիշա, Ջալլաղ, Մեղրի, Ազիզ դարիք, Ոմն, Ցաշողութիւն, Ոմն* 10-*նական, Ոմն, Ոմն, Ներսէսէկս, Սիրահար, Սուրէնեանց, Ոմն, Աշխ, Երախեան, Ցաթամ, Փալխան, Մաղթանք, Ոմն այլ, Բօրիս, Խենթ, Կայծակ, Կանին, Ոմն Դաւվինչ, Աման աման, Կար. Մար., Այքալաներ* 5-*ական*: *Գումար* 580 *ղրուն*:

Անդրանիկ խումբ՝ Աւետիսից 1570 *ղրուն, երեկոյթից* 520, *անդամավճար* 165, *հարսանիքում հանգանակ.* 172. 25, *խնջոյքում* 150 *ղրուն*: *Գումար* 2577 *ղրուն* 25 *կոպէկ*:

Մարաղայի Արշալոյս խմբ. 1904 *դեկտ. անդամավճար* 30 *ղրուն*, 1905 *յունուարի անդամավճար* 30, *հին վճարներ* 6, *Մ. Ց.*

Մխիթարեան 10, Թ. Մեսրոպեան 10, Ա. Թամրազեան 5, փետր. մարտ անդամավճար 92, Պօղ. Սահ. Աստ.-ից պատկերի փող 18, Գ.-ի վիճակախաղից „Դրօշակի" օգտին 10, Հ. Միրզ. 12, հին վճարներ 26, Գործակատար խմբ. 43: Գումար 292 ղրան:

Համադանում Խորէնի միջոցով հանգանակ. 355 ղրան:

Դամաւանդ Գիլանում հանգանակուած.— Սուրհանդակ 50 ղրան, Պ. Տ. Մնացականեան 50, Գոգոն 100, Հենոցի 60, Փայտակարանցի 40, Ոմն 30: Գումար 330 ղրան:

Նիշապուր.— Արամեան գրադարան 50 ղրան, Աղաջան 11, Նշտրակ 10, Գողթանցի 8, Դանիէլեան 10, Բախշի 10, Առաքելեան 10, Սամսոն 10, Սարին ղոլացի 8, Լեռնցի 5: Գումար 132 ղրան:

Ղազւին № 18 հանգանակ. Թերթով.— Արշակ աբէլեան 10 ղրան, Ոմն 5, Բաբաջան Եղիազարեանի ձեռքով 120, Խանանից 32, եւս 250: Գումար 417 ղրան:

Ղոզանից Ն-ի միջոցով 132 ղրան:

Գիլան կօմիտէն 1904 թ.— Ռաշտի հետեւեալ խմբերից՝ Կայծակ 156. 60 ղրան, Ղարատաղ 86. 40, Դղորդ Հայաստանի 65, Փունջ Հայաստանի 330, Կայծակ 120, նոյն խմբի վիճակախաղից 317, Հրաձիգ 180, Ղարատաղ 160, Մեղու 192, Մեղուին նուէր 71 ղրան, նուիրատուներն են՝ տիկնայք Ե. Մելիք [illegible]. 15, Մ-ն. 5, Ա. Դ. 5, Մ. Կ. 10, Հ. Ս. 10, Հ. Մ. 6, Շ. Սահ. Պ. 15, օր. Ս. Հ. 5, Մեղուի վիճակախաղ. 503, նոյն խմբի Հարսից 200, Դղորդ Հայաստանի 220, նոյն խմբին դօքտոր Թաթոսից նուէր 87, Դղորդ Հայաստանիի մի ներկայացումից 514. 25, նոյն խմբին Բէլուց 50, աղ. Յով. 100, փունջ եռամսեայ 161, Ղարատաղ 110, Մեղու 261, Կայծակ 135, Փունջ 135, Հրաձիգ 150, Դղորդ Հայաստանի 200, Դղորդ Հայաստանիի միջոցով մի խումբ երիտասարդներից 30, նոյն խմբի միջոցով 50, Հրաձիգի երեկոյթից 290 ղրան: Ընզելի խմբերից՝ Սէր 2[illegible]6. 10, նոյն խմբ. № 33 հանգ. թերթով 198, Հրայր 79. 25, Սէր 137, Հրայր 59, Սէր 97, նոյն խմբի անդամ Աւետիսից 562. 75, աղբիւրի երեկոյթից 400, նոյն խ. միջ. Ն. Ն. 337. 50: Գումար 6950 ղրան 85 կօպէկ:

Այրիանցի միջոցով հանգանակուած. Արեւելեան Բիւրոյի դրոշմաթղթերով № 40-49.— Յոյն Զաւափով 50 ղրան, Վարդ. Տէր-Յովհաննէսեան 50, Գասպ. Յովհաննիսեան 50, Ալէք Գրիգորեան 30, Թիւրք Քալպ Խամայիլ 30, Թիւրք մաշադի Նուբալ 30, Նիկալայ 50, Աղաբէգ 20, Եթիմով 50, Այրեան 50: Գումար 410 ղրան:

Բէնդէր խմբ. Քանարագեազում 1904 ապրիլ-դեկտ.— Անդամավճարներ 90 ղրան, Դավրիժցի 9, Շիր 9, Գողթան 9, Քէշիշ 9, Մանուկ 10, Արտէմ 9, Մկրտչից 2 ռուբլի) 12. 50, Մկրտչից զանազաններից 48. 70, 2 հոգուց 11. 90, Մուշեղ 20, Մնացական 6, Ներկայացումից արդիւնք 255. 30, անդամավճար 81, Զկնորս (15 ռուբլի) 90, Փաթ 3, Թղթախաղից Ամարանոցում 17, Ներկայացումից 171, բուֆէտից 120. 60, Պատրաստի մնացած 110. 50, Մոծակ 3, Ա. Մ. Ե. խանութից 2, Մի ոմնից 2, Մի հատ նկարից 1, Ռշտունուց աւել ստացած 6, Թղթախաղից 5, վիճակախաղից 15, Թղթախաղից 3, Կօստի 60, Ալէքսան 100, Նանաջան 82, Գուրգէն 40, անյայտ ոմն Ա. Կ. 150, Ստաքան 50, Աղքատ տուբանչի 25, Նասիբ 50, Ալէքսան 35, Ստաքան 25, Արտէմ 5, Կռունկ 140, Ալէքսան 23, Մի ոմն նորեկ 39, Շքր 87, Կօստի 8, Գուրգէն 65. 45, Դաւրէժ 4, Արտէմ 4, Ստաքան 23, Կռունկ 160, անդամավճարներ 63, Ներկայացումից զուտ արդիւնք 109. 50: Գումար 2477 ղրան 45 կօպէկ:

Ընդհանուր գումար 30,826 ղրան 35 կօպէկ:

ՆԱԻԲԱՆԴ կօմիտէն՝

I. խմբերից՝ Աստղիկ 44. 78 ռուբլի, Նետ 38. 10, Լուսատու 83, Արծուիկ 48, Մեղու 36. 10, Մովսէս 84, Զար խափան 14. 50, Աղբիւր 10. 30, Ա. Արօր 5. 50, Աքսոր 4, Արամեան 6. 95, Շղթայ 6. 60, II խմբերից՝ Գալի քուն 47. 80, Օձուտ 9. 50, Պօղես գիւղ 83, Բարխուդիշ 29. 60, Անջինջ խէթ 88, Թնդանօթ 35, Սաւուղ-սու 47, Մարիպոլ 25, Տարօն 25, III Անհատներից՝ Ա. Լ. Խ. 24, Ժ. Գ. Խ. 12, 26-ից 60, Ալագեազ 250, Սոլայից 300, IV պատահական՝ Սըմբատից 25, Հինգ երգիչներից 8, Անծանօթից 2, Աշակերտներից 3, Շրջիկներից Ս. Գ.-ի միջոցով 5, Շրջիկներից 517, Ս. Գ.-ի միջոցով 16, Մ. Ս-ից 75, Արտազանի նախահաշւից 24, № N -ից (խ.) 100, Դ. Խ. (№ 27) 25, Ա. Ա-ից 3, գրքերից եւ պատկեր. 4. 70, հանգանակ. 5, Մ.-ի խնջոյքից 17, Պահեստի տոկոս 12. 43, V. վիճակախաղ, ներկայացում՝ Նետ 140, եւս 26, Լուսատու 84. 90, Աստղիկ 93. 84, Մովսէս 74. 92, Նետ (երեկոյթ) 44. 12 ռուբլի: Գումար 2206 ռուբլի 94 կօպէկ:

ԱՊԱՌԱԺԻ կօմիտէն՝

1904 թ.— Վաճ. I բաժ. 230 ռուբլի, II բաժ. 117, III բաժ. 345. 60, IV 66, Րաֆֆի 40, Միջագէտ գ. Նիկոլ 80, Արծիւ 15, Փարոս 10. 5, Վրէժ 11. 25, Ջանֆիդայ 9, Սէր 13. 65, Կովկաս 5. 50, Կրակ 2. 75, Րաֆֆի 18. 32, Հրայր 6. 30, Խենթ 4, Արցախ 10, Երկաթ 35, Մի դատի առթիւ 1, Շահակերտցի Ս-ի ընծ. ծայրերի վաճ. 15, Խաչան գ.-ի Թուման խ. 7. 10, Աղբիւր-Սերոբ 4, Վազր Անդրանիկ եւ Թուման 15, Յաղթանակ Վրէժ 5, Շահակերտ գ.-ի Մուրճ, Թնդանօթ 20, Մեղրածորի Կայծակ, Երկաթ, Արօր, ուժ 12. 40, Փրկիչի Սպիտակաղբիւր, Անդրանիկ, Կաշաղակաբերդ 6. 85, Անապատի Կայծակ, Լաչին, Վարար ջուր, Թաւադ, Ասլան, Վարք 11. 70, Թարխանաբերդի Փիալա, Արեգակ, Պլպլան, Շղթայ, Վրէժ, Փոթորիկ, Գոտ, Կայծակ, Կապոյտ բերդ, Տիգրանակերտ, Անյոյշ բերդ 31. 55. Աւետարանի Խաչ, Լուսիկ, Քերծ, Մոմ, Արշակունի, Եկեղեցի, Շղթայ, Երկինք 8 98, Փրկիչի Վարազ, Սասուն, Արշալոյս, Ծերաբերդ, Արծւաբերդ, Էջմիածին, Հայրիկ 10. 25, Անապատիկի Երկաթ, Լուսնեակ, Աստղ 4. 57, Աւետարանի Ամպ, Արեգակ 1. 95, Ժայռի Աղբիւր, Աստղ, Սասուն, Ջրվէժ, Արշալոյս, Խաչէն, Զէյթուն, Մասիս, Կռունկ 14. 45, Ղարադուլմանի Ցուլակ, Ժայռ, Ջրաբերդ, Կայծակ, Փորձ, Խենթ. Արծաթ, Վան, Վրէժ, Ս. Գ.-ից, Անդրանիկ, Մշակ, Առիւծ, Երկաթ խ.-ից 16. 12, Ա. Բ. 2 ռուբլի:

Բերդածորի ենթակօմիտէից.— Բերդածորի Հրաշք, Աննման, Եղեմ, Ռաշիդ, Արծիւ 15. 15 ռուբլի, Զորաբերդի Հուր 70. 45, Ույժ, Կշիռ 11. 25, Լեռնադաշտի Վրէժ 8. 5, Ույժ գ. հանգանակած աւետիքից 6, Թալանագեղի Նամուս ամս. եւ հանգ. 14. 50, Շէնիկ գ. ամսավճ. Բողոք խմբ. 14, Զորաբերդցի Ս. Մ. 20, Սալկոտ գ. երկու խմբ. 13, Հայածոր գ. 10, Գրիգորիս գ. Ալմաստ 1, Վարդաշէնի Կայծակ 7, Զորաշէնի անդամավճարներ 5. 30 ռուբլի:

Ընդհանուր գումար 1466 ռուբլի 55 կօպէկ:

ԳԱՅԻՐԷԻ կօմիտէն՝

1904 յունիսէն մինչեւ 1905 մայիս.—

Յ. Համնէսեանի ձեռամբ X. քաղաքից 257. 5 ղրշ. ոսկ., նուիրատուներն են՝ Նժդեհ, Պանդուխտ, Գործաւոր, Ք., Արտաւազդ, Գ., Տ. Գ. 20-ական ղրշ., Ոմն 10, Եազուպ 10, Ա. 97. 20, Մանսուրայից 394. 2 ղրշ. ոսկ, նուիրատուներն են՝ Յ. Հինայիկեան 48. 7, Ք. Պալըքճեան 50, Հ. Վ. Չախըրճեան 40, Յ. Քարքերդեան, Մ. Սիմիտեան, Գ. Մ. Չ. 25-ական, Կ. Նէվրուզեան, Պ. Վարդանեան, Կ. Թօսունեան 20-ական, Վ. Սարաճեան 30, Ոմն 15, Ե. Պաթմանեան, Մ. Տամատեան, Դ. Թօսունեան, Ոմն, Ս. Կ. 10-ական, Յ. Համնէսեան 25. 20 ղրշ.: Հետեւեալ խումբերէ՝ Մանաճիհր 420 ղրշ., Զաւէն 300, Րաֆֆի 120, Հրայր 300, Արծրունի 115, Պարոյր 110, Ըմբիշ 50, Մամգունի 50, Համակիր 210, Արարատ 60, Արուսեակ 370 ղրշ.: Ք. Մազլումեան Մինիա 200, Պ. Շահէնեանի տօնախմբ. առթիւ 60, Ա. Քէօշէյեան՝ Յ. Աքգարեանի հարս. առթիւ 97. 5, Տապար խմբ. 80, Բաբկէն խմբ. 30, Օ. Մելքոն 50, Փայլակ՝ Յ. Աստուրեանի միջոցով 390, Ա. Քեօշէյեան իր զաւկի կնունքի առթիւ 97. 5, Յ. Աքգարեան իր ամուսնութեան առթիւ 97. 5 ղրշ.: Գումար 3859. 2 ղրշ. ոսկ:

ԹՄԲՈՒԿ կօմիտէն՝

1904 թ. յունիսից մինչեւ 1905 թ. յունուարի 1.—

Սառն աղբիւր գիւղից 10 ռուբլի, նոյն գիւղից 8, Բլուրակ գիւղ 10, մի գործողութիւնից 25, տուգանք խաչագողներից 30, եւս տուգանք 50, Մուրհակի կողմից 15, Քաղաքից՝ Ասլան Բալասի խմբ. 32. 15, Լեռ խ. 1. 20, Կիլիկիա խ. 43, Մուրճ խ. 2. 5, Առիւծ 5, Աւարայր 13, Արաքս 7, Մուրճ խ. 2, Լեռ 8, Ջրպետից 3, Ապուլ սար 20, Սարեակ գիւղի Նորաշէն խ. 30, Մշակ գիւղի Արծիւ խմբ. 65, Լոյս գիւղի Մուրճ խմբ. 11. 45, Սուրհանդակ գիւղի Արմատ խմբ. 74. 6, Մաճկալ գիւղի Անդրանիկ խմբ. 24. 89 ռուբլի: Գումար 469 ռուբլի 80 կօպէկ:

1905 թ. յունուար 1-ից մինչեւ 31 մարտի.—

Հետեւեալ խմբերից՝ Փայլակ 4 ռուբլի, Խանասօր 9. 35, Մուրճ 4, Տարօն գիւղի Կայծակ 10, Դաշտ գիւղի Ճառախօս 25, Համերաշխ գիւղի Կրակ 30, Աւարայր 20, Կիլիկիա 15, Մասիս 8. 15, Արագ 9. 20, Վրէժ 5, Արաքս 3, Կազբէկ 6. 90, Անի 24. 25, Կամքար գ. Վասպուրական 42, Ծաղիկ գ. Առիւծ 10. 35, Տարօն գ. Կայծ 43, Քարբերդ գ. Հին եւ Նոր 23. 75, Կոտիմ գ. Արմատ 54. 36, Փոքր խաչ 10. 40, Քրիստափոր 10, Տարօնի Առիւծ 3, Արծիւ 1. 50, Բին-գեօլ 11. 25, Խանասօր 17, Աւարայր 15, Մուրճ 2. 40, Մեքենայ 6. 70, Մուրճ 2. 40, Լեռ 4. 80, Վարդան 1, Մուրճ 2. 45, Խանասօր 24. 45, Փայլակ 9. 75 ռ.: Մի քէֆից 4. 95 ռ., Մաճկալ գ. ներկայացում. 7, Զ. Ա. Կ. Գ. 5, Նոր սիրտ համասփիւռ գ. 35. 35, Մարզագետին գ. 174, Բլրակ գ. 85, Ջինուր գ. Արտի ձեռամբ 49, Յովնան գ. 100, Կոտիմ գ. Համզարից 18, տուգանք Կար Մալիկից 3, Քարբերդ գ. Ներկայացումից 2, Լումթազ բ. 10. 45, տուգանքներ Լումթազ գ. խմբերից 9. 98, Միսաք Շամիլ 6, Բարձրաւանդակ գ. 90, Արծուիկ 12. 25, Արարատ գ. ներկայացումից 10. 30, Քարբերդ ներկայացումից 4. 75, Արարատ գ. 28. 20, մի խնջոյքից 2. 7 ռ., մի ոմնից 150 հատ մօսինի փամփուշտ, Կիլիկիայ խմբից 150 փամփուշտ:

Ընդհանուր գումար 1379 ռուբլի, 99 կօպէկ, 300 փամփուշտ.

Մեր խմբագրութեան հասցէն՝
Rèdaction du „DROSÇHAK", Genève (Suisse).